ՌՈՒԶԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ - ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԽԱՌՆԱՇՓՈԹ ԳՈՒՅՆԵՐ

ՄԱՐՏԻ 1, 2023

Ռ. ՄԻՐԶՈՅԱՆ

ԽԱՌՆԱՇՓՈԹ ԳՈՒՅՆԵՐ

Ռուզան Միրզոյան

ԽԱՌՆԱՇՓՈԹ ԳՈՒՅՆԵՐ

Երևան 2023

ՀՏԴ 821.19-8 Միրզոյան
ԳՄԴ 84(5Հ)
Մ 763

Խմբագիր՝ Սուսան Վարդանյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Միրզոյան Ռուզան
Մ 763 Խառնաշփոթ գույներ / Ռ. Միրզոյան.- Եր.:
Լուսաբաց, 2023.- 88 էջ:

«Խառնաշփոթ Գույներ» գիրքը բանաստեղծ Վաչագան Վարդանյանի դստեր առաջին հրատարակությունն է, որում արտահայտված են հեղինակի տարբեր տարիների հույզերն ու խոհերը: Գրքում զետեղված բանաստեղծություններն ու առակները, ինչպես նաև յուրօրինակ հեքիաթ – պատմվածքները իրենց մեջ խոր իմաստ են կրում:

ՀՏԴ 821.19-8 Միրզոյան
ԳՄԴ 84(5Հ)

ISBN 978-9939-69-409-2
© Միրզոյան Ռուզան, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԺՊԻՏԻ ԵՐԱՆԳՆԵՐ

Անխելք Ոչխարներ 6
Խոզն ու Հորթը 8
Փիղն ու Մոծակը 10
Սուտն ու Ճիշտը 12
Խոզն ու Խիղճը 13
Խիղճը 14
Օրինանք ու Անեծք 16
Ստահակը 18

ԽԱՌՆԱՓՆԹՈՐ ԵՐԱՆԳՆԵՐ

Նեղանում Ենք 20
Ուշացած Կտակ 22
Վարդը 25
Կակաչը 26
Դե Թռիր Արծիվ 30
Քամին 32
Երկնային Սանդուղք 34

ՄԱՅՐԱՄՈՒՏԻ ԵՐԱՆԳՆԵՐ

Դրախտի Ճամփան 36
Հուղարկավորում 37
Ծերացած Վիշտ 38
Ծննդյան Տոնի Առթիվ 41
Աշուն 42

Ձնեմարդը 44
Անձրև 46

ՍԻՐՈ եվ ԹԱԽԻՃԻ ԵՐԱՆԳՆԵՐ

Գարնանային Սեր 48
Մնաս Բարով 49
Հրաժեշտ Արյունոտ 50
Իմ Քնքշությունը 52
Քո Աչքերը 53
Կորած Երազներ 54
Մենություն 55
Անծանոթին 56
Հզոր Ռետին 57
Մամ Ջան 58

ԻՐԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ ԳՈՒՅՆԵՐ

Սիրո Կրակը 60
Այ Քեզ Ընտանիք 62
Արցունքի Կաթիլը 65
Սխալ Նոտան 66
Սիրո Կաթիլը 71
Սիրո Սովորական Հեքիաթ 74
Թիթեռային Սեր 83

ԺՊԻՏԻ ԵՐԱՆԳՆԵՐ



ԱՆԽԵԼՔ ՈՉԽԱՐՆԵՐ

(առակ)

-Էյ , դու՛ք, ոչխարներ հինավուրց ցեղի,
Էլ ես չեմ թողի ոչ ոք ձեզ նեղի:
Եկեք աստծու մոտ գնանք միասին,
Ու վերջացնենք մեր բողոքները սին,-

Ասաց իմաստուն խելոք ոչխարը,
Ոտքով նա անցավ ամբողջ աշխարհը:
Աստծուն չգտավ, դարձավ տուն կրկին,
Տեսավ սաղավարտ հագած այր ու կին՝

Բոլորը մեկտեղ պոզերը սրած,
Կռվի միշտ պատրաստ ու ամուր կանգնած:
Նրանք գոչեցին. «Ասաց մեզ աստված
Ձենքը բոլորիդ շատ ճիշտ է տրված»:

Աստված այդ պահին որոտաց կրկին՝
Ամպրոպ, կայծակով փակելով երկրին.
«Հերի՛ք դժգոհեք, չունեք սուր ժանիք,
Ապրում եք կամ էլ առանց պինդ տանիք

Չեմ դրել ոչ մի խտրականություն,
Ձեզ պոզ եմ տվել ու միասնություն»:
Սարերը հանկարծ ողջ սպիտակեցին,
Հեռվից ժանիքներ փայլատակեցին,

Ու գորշ գայլերի դաժան մարտերում
Աստծո խոսքերը պահած սրտերում՝
Տաս ոչխարները սպանում էին մեկին,
Իսկ մեկ ոչխարը սպանում էր տասին:

Հաղթեցին նրանք ու գոռոզացան,
Գայլերի հետ գորշ շուտ ընկերացան:
Ձարդեցին իրենց սուր-սուր պոզերը
Մոռացան աստծուն ինչպես խոզերը:

Էյ, դու՛ք, մանկամիտ ոչխարներ հիմար,
Այդքան մի եղեք անպատիվ, տխմար:
Գայլերը գառան մորթիներ հագին
Ուտելու են միշտ ձեր սիրած ձագին:

ԽՈԶՆ ՈՒ ՀՈՐԹԸ

(առակ)

Գիրուկ մի խոզ ցեխոտ, մրոտ
Թավալվում էր կեղտաջրում,
Հորթին տեսավ, վազեց նա մոտ՝
Վազքով խոզն իր կեղտն էր ցրում:

Ցեխը թռավ հորթի պոչին:
Դա, իհարկե, շատ էր չնչին,
Բայց զարմացավ խոզն այդ կեղտոտ,
Երբ որ հորթին տեսավ ցեխոտ:

Ու ձայնեց նա խիստ վրդովված.
-Չե՞ս ամաչում, մի քե՛զ նայիր:
Դուրս ես եկել այդպես զուգված,
Գո՛նե պոչդ լվանայիր:

Սա՛ ինչ կարգ է, սա՛ ինչ բարք է,
Պարզապես սա ցա՛ծր վարք է:
Ո՞վ է տեսել փնթի այսքան:
Թո՛ղ բոլորն էլ այստեղ շուտ գան,-

Վազեցին մոտ գազանները.
-Իսկապես որ պոչն է տղմոտ:
Այս հորթերը՝ անբանները
Ժողովուրդ են խիստ անամոթ,

Չեն լողանում ողջ մի ամիս:
Խոզն էլ ապրի այս ծանրամիս,
Տեսե՛ք ինչքան լավն է, մաքուր՝
Նա չի սիրում ոչ կեղտ, ոչ մուր:

ՓԻՂՆ ՈՒ ՄՈԾԱԿԸ

(առակ)

Քույրի՛կ, լսե՞լ ես՝ առավոտ ծեգին
Սեր է խոստացել փիղը մոծակին.
--Ինչե՞ր ես ասում, ա՛յ քեզ նորություն,
Համա թե սեր է, համա զորություն:
Զանգեմ իմ փեսին՝
Պարոն աղվեսին.
-Ալո՛, լսում եմ, ե՛ս եմ՝ աղվե՛սը,
Այդ գործում չունեմ ես ձեր հավեսը,-
Օրը չբացված աշխարհը թնդաց,
Օդը դողդողաց արջի բամբ ձայնից:
-Շլդի՛կ իմ եղբայր, ականջներդ բաց,
Ինչեր եմ լսել ես գայլի մանչից՝
Անգութ մոծակը սիրում է փղին,
Հալից գցում է, տանջում խեղճ տղին:
-Ալո՛, տա՞նն է լուն,
Ես եմ, տիկին բուն:
Փիղը մոծակին համբուրեց ցավոտ,
Աչքովս եմ տեսել հենց այս առավոտ:

-Ալո՛, մոծակը փղի սիրուհի՞ն.

-Ի՞նչ, փի՞ղը,- գույնը գցեց փղուհին:

Ու հանկարծ մի ամպ ներխուժեց անտառ՝

Դզզոցով վայրի ու հրակայտառ:

Հնչեցրին ռազմի հզոր շեփորներ,

Եկան, լցվեցին բազում ցմփորներ,

Նիհար մոծակներ, մոծակներ ճաղատ.

-Պահե՛լ մոծակի պատիվն անարատ:

Ու կծոտեցին, էլ չկար հնար՝

Ում մորթին հաստ չէր, դե թող դիմանար:

Արյուն տենչացին ու հերոսաբար

Ընկան այդ մարտում ու լռեցին հար:

Մնչդեռ անտեղյակ այս անց ու դարձից,

Մոծակից, նրանց հուզող այդ հարցից

Փիղը մեր անդարդ

Քնած էր հանդարտ:

ՍՈՒՏՆ ՈՒ ՃԻՇՏԸ

(առակ)

Մարդիկ մտքով երբ կուրացան,
Սուտն ու ճիշտը ընկերացան:
-Ամբողջ կյանքում չեմ ստել ես,-
Ստեց սուտը այդ աներես:

-Ճի՛շտ է ասում,- ճչաց ճիշտը,-
Ես լսեցի ճշմարիտը
Ու կպահեմ այն իմ սրտում,
Սուտը երբեք Է՛լ չի ստում:

Ճիշտն իր ճիշտն է իրոք ասում,
Իր լսածն է լոկ փոխանցում:
Ի՞նչ է ստացվում՝ այս աշխարհում
Ճիշտն էլ արդեն սու՛տ է խոսում:

ԽՈԶՆ ՈՒ ԽԻՂՃԸ

(առակ)

Խղճաց խիղճը խեղճ խոզին՝
Փոշոտ ընկած էր հողին:
Մարդիկ վրան ծիծաղում,
Հռհռում էին ու ծաղրում:

Պետք էր օգնել դժբախտին,
Արժանի չէր այդ բախտին:
Թռավ խիղճը խիստ հուզված,
Վազեց խոզին ընդառաջ:

Տեսավ զրկանք, տեսավ ցավ,
Ցեխով, ճահճով նա անցավ,
Փոշուց կեղտից սևացավ,
Հասավ խոզին զարմացավ:

Խոզն ընկել էր ծիծաղից,
Ուշքն էր գնում իր ծաղրից.
-Ա՛յ խիղճ, կեղտոտ ես այնքան,
Փնթի խոզ ես իսկական:

ԽԻՂՃԸ

Քայլում էի զվարթ և անհոգ այնպես,
Երկինքն էլ ջինջ էր զուլալ ջրի պես:
Ոտքերս էլ գոհ էին տիրոջից անբան՝
Թեթև էր բեռը, զարմանալի բան:

Հանկարծ մի քարի դիպան անզգույշ,
Քիչ էր մնում թե կյանքս դառնար հուշ:
«Անպիտա՛ն ոտքեր, նայե՛ք ձեր դիմաց,
Թե փուշ կամ քար կա, անցեք դուք կամաց»,

Բայց չէ, դա քար չէր, լպրծուն մի բան
Շնչում էր ծանր, ինչի՞ էր նման:
Ախ հա՛, հասկացա, դա խիղճ էր կեղտոտ,
Կորցրել էր մեկը իր խիղճը մեղսոտ:

«Կգտնեմ նրա տիրոջը անճար,
Կլվամ խիղճն այդ ու կասեմ՝ դե տա՛ր»:
Ու ես կռացա, մի քիչ զզվանքով
Այդ օտար խիղճը վերցրի մեծ ջանքով:

Մի սարսուռ սողաց կպնելով մատիս,
Բարձրացավ մեջքից ու հասավ սրտիս:
Բանից պարզվում էր՝ ես էի այդ տերը,
Նորից ծանրացան իմ խեղճ ոտները:

ՕՐՀՆԱՆՔ ՈՒ ԱՆԵԾՔ

(առակ)

Օրհնանք ու անեծք բախվեցին մի օր,
Անեծքն անիծեց օրհնանքին հզոր.
«Չորանա շուրջդ՝ մնաս դու ունայն,
ՈՒ վերանաս շուտ աշխարհից համայն»:

Օրհնանքը լուռ էր ու անպատասխան,
Անեծքն էլ կարգեց ինքն իրեն իշխան.
«Օրենքով եթե ընտրեք ինձ նորից,
Երջանիկ կապրեք, ուրախ բոլորից:

Ոսկյա անեծքներ ձեզ կբաժանեմ,
Այս նոր պաշտոնին ես արժանի եմ»:
Պաշտոնյան իրոք չէր խաբում բնավ,
Անեծքներ բերեց, երբ նորեն եկավ:

Բոլորն անեծքի նետից վայր ընկնում,
Նորից անիծում, ելնում էին, կանգնում:
Օրհնանքն էլ մտքում օրհնանքներ ասում,
Իր հաղթ ավարտին անվերջ էր սպասում:

Հանկարծ կատարվեց շատ զարմանալին
Օրհնանքը գտավ միակ բանալին.
«Հերիք դու լռես, ինքդ քեզ խաբես՝
Պիտի թշնամուն իր զենքով խփես».-

Ասաց դարերից եկող օրհնանքը
Ձեռքով փակելով դեմքի հեգնանքը.
«Օրհնվի պահն այն, անեծք դու ունայն,
Երբ վերանաս շուտ աշխարհից համայն»:

Երբ անեծքն իր իսկ բառերը լսեց,
Շփոթվեց, կծկվեց, հավետ նա լռեց:
Իսկ օրհնանքն էլ գոհ իր օրհնված հողում
Օրհնանքներն էր իր բոլորին հղում:

ՍՏԱՀԱԿԸ

Ապա նայեք այս ստահակին,
Խոր թաքցրած իր մահակին,
Հարվածներ է տեղում ահից
Ու ժպտում է. «Ներեցեք ինձ»:

Մարդիկ էլ լուռ ներում նրան
Մահակին են դատում միայն,
Իսկ ստահակը մեր «պատվական»
Ինքն է իրեն միակ վկան:

ԽԱՌՆԱՓՆԹՈՐ ԵՐԱՆԳՆԵՐ



ՆԵՂԱՆՈՒՄ ԵՆՔ

Նեղանում ենք ազգով բոլոր՝
Բարեկամը մեր դարավոր
Լքեց կռվում այս ահավոր,
Ողջ աշխարհի մարդկությունը
Գոհ ընդունեց պարտությունը
Հայոց ազգի մեր զորավոր:

Նեղանում ենք, որ այդ հուժկու
Թշնամին մեր շատ ահարկու,
Երբ չի հաղթում հայոց բազկին,
Խաբելով է տիրում ազգին՝
Դեմ հանելով մեկը մեկին:

Իսկ այդ պահին նեղանում են
Ճամփաներն իմ հայրենիքի,
Գյուղերը մեր դատարկվում են:
Սահմաններին մեր Սյունիքի
Թուրքն է առանց իրավունքի:

Նեղանում ենք մենք մեզանից,
Մեր թվացյալ ղեկավարից:
Մեղադրում ենք մենք տեր աստծուն՝
Մեր փոխարեն նա այս կյանքում
Մեր հողի մեջ մեզ չի փրկում:

Բա ի՞նչ անենք, բա ո՞նց անենք,
Նեղանալը մեզնից վանենք:
Քաջ Միերին մեր նեղացած
Ժայռից հանենք ու կռիվ տանք,
Կամ ազգովի մենք ժայռ դարձած
Ու նեղացած հավերժ մնանք:

ՈՒՇԱՑԱԾ ԿՏԱԿ

Հայրը մեր պատռեց ամպերի քողը,
Տեսա երկնքում իր դեմքի շողը
Ուզեցի փարվել ես կարոտագին
Իմ խրոխտ, բարի հայրիկին անգին,

Բայց նա մռայլ էր ու խիստ զայրացած,
Ձգված էր դեմքը, մի քիչ քարացած:
Ձայնեց նա վերից.- Ինչու՞ պիտի գամ,
Կտակ եմ թողել, չեք բացել անգամ,-

-Հայ՛ր,- մրմնջացինք,- պետք չէ մեզ ոչինչ,
Գոհ ենք մեր կյանքից, ունենք ամեն ինչ,-
Ցոլաց երկինքը, կեղծավոր քամին
Կտակը գցեց մեր դռան շեմին:

Երկյուղով վերցրի փաթեթը գրված,
Բացեցի ես այն, ինչ ինձ էր տրված:
-Խի՞ղճ, ինչիս է պետք՝ շատ ունեմ արդեն,
Հա՛յր, խղճա դու ինձ, ետ վերցրու նորեն,-

Քույրս՝ ավագը, պահվածքով համեստ,
Թուղթը բացեց իր. «Խոսելու արվե՞ստ»,
-Հա՛յր իմ դու բարի, ես միշտ եմ արդար,
Մտքի թռիչքով, լեզվով իմ ճարտար,-

Փոքր քույրիկիս հասավ բարություն:
-Ոչ մեկի հանդեպ չունեմ չարություն,-
Ասաց նա, թուղթը տվեց եղբորը,
Այդ պահին նորից կորցրինք մեր հորը:

Երկինքը փակվեց, քամին այդ չնչին
Բացեց իմ եղբոր փաթեթը վերջին:
Տեսանք մենք մի գիրք մեր հորից գրված՝
«Հազարան Բլբուլ» պոեմը սիրված:

Ամպերի խորքից լսվեցին նորից
Նախատինքները մեր բարի հորից.
-Հերի՛ք է ապրեք միայն ձեզ համար,
Մեր ազգը ունի ցավեր անհամար:

Թե ունես դու խիղճ՝ խղճա ամենքին,
Ովքեր չեն տեսնում իրենց մեջ չարքին
Մի դատիր մտքով կուրության համար,
Ճամփաներ ցույց տուր անհուն, անհամար:

Ունե՞ս բարություն, ճի՛շտ օգտագործիր,
Մի արդարացրու մի ոճրագործի,
Որ նախընտրելով ոսկին ու փողը
Արյունով ներկեց հայրենի հողը:

Թե ունես արվեստ խոսքի՛ մեջ ճարտար,
Անտարբեր լինելն ինչո՞վ է արդար:
Ինչու՞ ես լռում, երբ դևը ներքին
Կեղծում է, ստում, պառակտում ազգին:

Զավակնե՛ր իմ քաջ ու հա՛յ ժողովուրդ,
«Հազարան Բլբուլ»ն ունի ճիշտ խորհուրդ՝
Կտրե՛ք գլուխը մեր ներքին դևի
Ու ողջ հայ ազգը կհարատևի:

ՎԱՐԴԸ

-Օգնեցե՛ք,- լսվեց աղեճիչ մի ձայն:
Նայեցի շուրջս, դատարկ էր, ունայն:
Այդ դաշտում անծայր մենակ էի կարծես,
Ողբաձայն ո՞վ էր կանչում ինձ այդպես:

Ախ, ահա թե ինչ՝ մի վարդ էր ջահել,
Գլուխը բարձր էր չնայած պահել,
Մոլախոտ մի չար հասած մուրազին
Փաթաթվել էր պինդ ու կպել վզին:

Հեռացրի ծակվող մատներով նրան՝
Առողջ էր վարդը՝ փշերը վրան:
Մոլախոտն էլ չար իր հոգուն վայել,
Ձայրույթից թող որ փրփրեր նա էլ:

Գիշերվա մթին, երբ դարձա ես ետ,
Չորացած վարդը ընկած էր հավետ:
Չխղճա՛ք, մարդի՛կ, այդ բույսին վայրագ,
Մոլախոտ տեսնեք՝ քաղհանե՛ք արագ:

ԿԱԿԱՉԸ

Կարմիր դաշտը մեղմ հովից
Ծփում է հեզ, քնքշորեն,
Կակաչների այդ ծովից
Թնդում է երգն ուժգնորեն:
Ապրում են անդ շատ ցեղեր
Կարմիր խառնած կանաչին:
Ճիշտ է ունեն սև տեղեր,
Բայց դա այնքան է չնչին:
Քիչ էլ, եթե դու գնաս,
Լեռն է կտրում քո ճամփան:
Բարձր են, հպարտ ու անհաս
Իր գագաթներն առնական:
Կապույտ երկնի գույնի հետ,
Փնթի վրձնից նկարչի
Ծոր է տվել կարմիր կետ,
Բայց դա, ախր, նկար չի:
Լեռան ծայրին շատ հպարտ
Կակաչ է մի մենավոր,
Շոգից, քամուց նա անպարտ
Հաղթանակի է սովոր:

Ապտակում է արևը,
Բորբոքվում է քամին չար,
Ցածը մեղմ, իսկ վերևը
Մտրակում է, չկա ճար:
-Սիրու՛ն կակաչ, իջի՛ր ցած,-
 Բարեկամներն են այդ հին,
Ձայն են տալիս վախեցած
Ու միանում կարծիքին՝
Թե հիմար, խելքը գցած
Մենակյաց է նա վերին,
Փուչ է ողջ կյանքը անցած,
Ինքն է դարձել իր գերին:
Իսկ նա ժպտում է շատ հեզ
Բարձունքից իր աննահանջ.
-Լսե՛ք, ուզում եմ տալ ձեզ
Իմ աչքերը հոգնատանջ:
Այստեղ քամու թևի հետ
Անմահությունն է պարում:
Ինձ մոտ բերող արահետ
Կա թաքնված այն սարում:

Եկեք այստեղ վայելենք
Կյանքը սիրուն ու դաժան:
Մենք լեռնային կակաչ ենք
Ոչ թե փխրուն մի շուշան:
Վեր ելեք դուք լեռան լանջ,
Արևն այստեղ է ծնվում,
Ու հոգին իմ աննահանջ
Նրա գույնով է սնվում:
Չունենալով ոչ մի շահ
Հասել եմ ես կատարը,
Հոգու թռիչքն իմ անմահ
Թող որ լինի դադարը:
-Հեռվում գույներ կան փայլող,-
Կանչում է մի ճղճղան,-
Տե՛ս, ծաղիկները քայլող՝
Աղջիկը այն ու տղան,-
Աղջիկը նէնգ, խորամանկ,
Ժպտում է ճիշտ ոնց Նեռը.

-Եթե ես քեզ շատ եմ թանկ,
Բարձրացիր դու այս լեռը
Ու շուտ հասիր կակաչին,
Որ աճում է միայնակ,
Կարժանանաս իմ պաչին՝
Քեզ տաս որպե ժամանակ,-
Ա՛խ, հեռանում են դաշտից
Կակաչն, աղջիկն ու տղան,
Իսկ ամբոխն իր խոր վշտից
Նստում է լուռ սև սեղան:
-Բաժակները լցրեք լի,
Հանճար էր նա իսկական:
Հիմա ո՞վ մեզ կպատմի
Վերևներում ինչեր կան.-
Ծիծաղում է՝ սրտում սեր,
Այդ անկակաչ ցողունը՝
Կակաչներն են ելնում վեր,
Խանգարվել է արդ քունը:

ԴԵ ԹՌԻՐ ԱՐԾԻՎ

Արծի՛վ, մի նայիր այդպես նենգորեն:
Ես ի՞նչ մեղք ունեմ, որ մի անորեն
Քեզ բանտ է նետել ու կողպել դուռը,
Տեսնում եմ ես քո սրտի սարսուռը:

Աղաչում եմ քեզ, հավատա նորից՝
Աշխարհում ամբողջ բարձր ես բոլորից:
Երկնի կապույտն էլ արևաճաճանչ,
Արծի՛վ, վստահի՛ր, սպասում է անկանչ:

Մերժված, չփորձված կտորներ մսի
Հոտել են կողքիդ, արծի՛վ, ինձ լսի՝
Ու՞մ է պետք, ախր, հպարտությունդ,
Ոչ ոք չի տեսնում անպարտությունդ:

Ազատ աշխարհում այս լայնատարած
Այդպես եղել է ու միշտ կլինի՝
Թռչել չիմացող ինչ-որ արարած
Շուրջդ կարող է վանդակներ շինի՝

Քո տկար, կամ Է՛լ քնած ժամանակ,
Ու հայտնի. «Տեսե՛ք, տարա հաղթանակ»,
Ծիծաղի վրադ, հռհռա.«Ծի՛վ, ծի՛վ,
Եթե կարող ես, դե թռի՛ր, արծի՛վ»:

ՔԱՄԻՆ

Հարբել էր քամին,
Ու այդ ուշ ժամին
Հանել էր քնից
Մենավոր կաղնուն:

Կառչել էր բնից
Ճյուղերից նազուն,
Տանում ու բերում,
Ճոճում էր, ջարդում:

Ամպերն էին ոռնում
Հարբած խելահեղ,
Նշան էին բռնում,
Կայծակում ահեղ:

Զարմացած դավից,
Գոռում էր ցավից
Կաղնին շփոթված.
Գթա՛ ինձ, աստվա՛ծ»:

Ջարդվում էին, պարտվում
Ճյուղերը հպարտ,
Ոնց էին կոտրտվում
Ախ, չկար ավարտ:

Ու ճարճատյունով,
Բարձր շաչյունով
Կաղնին այդ հզոր
Փռվեց ցած անզոր:

Դա չէ ահավոր,
Կամ արտասովոր՝
Քամուն միշտ սովոր
Կաղնին դարավոր

Քամու մտերիմ
Եվ հավատարիմ
Բարեկամն էր հին
Ի ցույց աշխարհին:

ԵՐԿՆԱՅԻՆ ՍԱՆԴՈՒՂՔ

Երկնային սանդուղքով վերև բարձրացա,
Սարքեցի ես ամպե պարգևներ
Ու անհոգ նայեցի ներքև, ցանկացա
Իջնել ցած ու մարդկանց տալ թևեր:

Բայց ու՞ր է սանդուղքը, ճամփաս եմ շեղել,
Գուցե այն երազներս են անցած:
-Հեքիաթ է,- ասում են,- սանդուղք չի եղել,-
Հիմա ես, ախ, ինչպե՞ս իջնեմ ցած:

ՄԱՅՐԱՄՈՒՏԻ ԵՐԱՆԳՆԵՐ



ԴՐԱԽՏԻ ՃԱՄՓԱՆ

Շատ մահեր կգան, դուռդ կթակեն
Ու չեն էլ հարցնի ոչ թույլտվություն,
Ոչ տարիք, ոչ սեռ, ոչ էլ ազգություն:
Փակ պահիր դուռդ, թող որ չքանան,
Բայց թե երկյուղես նույնիսկ մեկ վայրկյան,
Նրանք կգտնեն ներս գալու ճամփան
Ու կյանքդ կապրես չապրելու նման:

Իսկ թե աստծու հետ կապել ես պայման՝
Նրանից խնդրել դրախտի ճամփան,
Դու պիտի սպասես այն միակ մահին՝
Որ որոշվել է քո ծնված պահին:
Կյանքից առավել, մաքրությամբ անբիծ
Պիտի պաշտես այդ անտեսանելին՝
Նա է դրախտի միակ բանալին:

Ու երբ դու դառնաս իր սիրուն արժան,
Եվ փաթաթվի քեզ մի օր նա դաժան,
Մի վախեցիր դու ու սիրիր նրան՝
Սիրուց է ծնվում դրախտի ճամփան:

ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Դղրդոց, ամեհի դղրդոց,
Ու քարեր, որ ներքև են թափվում,
Շրթունքներ խուճապող, սառսռոց,
Աղոթքներ, որ երկինք են նետվում:

Ու զեփյուռ մի զվարթ ու պայծառ՝
Դուրս նետված կապանքից այս կյանքի
Զով համբույր սփռեց և կայտառ
Թռավ շուտ իր դաշտերն հայրենի:

Ուր սարեր ու ձորեր հարազատ,
Աղբյուրներ ու գետեր սառնորակ
Գրկեցին ու լացին շատ ազատ,
Խաղացին ոնց մանուկ ժամանակ:

Ու նայեց իր հեռվից աշխարհին,
Զարմացավ՝ ճիչ ու լաց, հառաչյուն.
-Իմ համար երջանիկ այս պահին,
Հե՛յ, մարդի՛կ, դուք ինչու՞ եք սգում:

ԾԵՐԱՑԱԾ ՎԻՇՏ

Գնում էր լուռ, գլխահակ
Անցորդ մի խեղճ ու մենակ:
Անձրև էր, ախ, շարունակ,
Չուներ ոչ ծածկ ոչ գդակ:

Ձեռքին մի հին ձեռնափայտ
Քայլքն էր հաշվում մինչև մահ:
Հանգչող աստղ էր նա անհայտ,
Լոկ բարությունն էր անմահ:

Մինչդեռ այդ հորդ անձրևից
Մարդիկ դես դեն էին փախչում
Աստված կարծես վերևից
Նրան իր մոտ էր կանչում:

Կծկված ցրտից ու ցավից
Սահում էր նա փողոցով,
Տխուր հոգու անձավից
Երգում՝ ձայնի դողոցով.

«Անձրև՛, խղճա ինձ՝ ծերիս,
Ապրեմ, տեսնեմ թոռներիս:
Այն տան մուտքին, որ հասնեմ,
Այնտեղ նամակ կամրացնեմ:

Այդ տան մեջ է մեծ տղաս՝
Ինժեներ է խեղճ բալաս:
Հարսս լավն է՝ ճտպտան,
Անող դարձող կնիկ տան:

Այդ ո՞նց եղավ, չիմացա,
Աչքերս են, ախ, մի քիչ կույր,
Այնպես գոռաց՝ զարմացա,
Ասաց.- Հերի՛ք լինես հյուր,-

Ու լաց եղավ, փրփրեց,
Ինձ էլ տանից դուրս հրեց՝
Ուզում էի ես անպայման
Խրատ ասել հոր նման:

Տղաս տանը քնած էր,
Խեղճը գործից հոգնած էր:
Թէ չէ ինձ նա կպահեր,
Սիրտս նորից կշահեր:

Իսկ դու, անձրև՛, մի ծեծի՛ր
Ու մի այդպես հալածի՛ր:
Այնքան օրեր են անցնում,
Հարսս դուռը չի բացում:

Աշխարհում այս պատվական,
Բարի մարդիկ դեռ շատ կան:
Բայց ես մատաղ իմ տղին
Թող նա հանձնի ինձ հողին»:

ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հայ՛ր, դու նորից ինչպես առաջ
Ձնծաղիկի կապույտ թերթից
Դուրս կնայես մերթ ձախ, մերթ աջ
Ու կարտասվես ծաղկի շուրթից.
-Դստրիկներս էս ու՞ր կորան:

-Նրանք հեռու, հեռու են շատ,-
Կասի քամին այդ բացբերան,-
Օտար երկրում այն արևշատ
Հավքն են փնտրում քո հազարան:
Գուցե գտնեն ու շուտ տու՞ն գան,-

Թե քիչ լինի դստեր սերը,
Դու մի՛ տխրիր, հայ՛ր իմ բարի,
Կգան ավագն ու կրտսերը
Ու կխոսի հավքը գերի.
-Ծնունդդ, հա՛յր, օրհնվա՛ծ լինի:

ԱՇՈՒՆ

Ձայներ էին ծանոթ ու դուռն էին թակում,
Այդ ո՞վ էր շատ ուշ սպասում ինձ բակում:
Բացում, ապշում էի՝ չկար ելումուտ,
Դատարկ պատեր էին՝ առանց լուսամուտ:

Սա ի՞նչ կատակ էր, ինձ ո՞վ էր կանչում,
Ու շատ հարազատ ծիծաղ էր հնչում:
Աշնան ծիծաղն էր, երկար էի սպասել,
Սիրո խոսքեր հին ինչքան էի ասել:

Գրկում էի նրա ծամերը ոսկյա
Կամաց ասելով. «Աստված է վկա,
Աշո՛ւն, սիրում եմ պատկերը քո միշտ,
Հանդարտ գալիս ես առանց դարդ ու վիշտ:

Գույներն եմ սիրում քո պաղ անձրևի,
Երգերը միալար դեղին տերևի,
Որ ճոճվում է մեղմ քամուն հնազանդ,
Ու ընկնում է ցած անվախ, անզարզանդ»:

Աշունն ինձ լսում, ամպին լուռ զարկում,
Ու հորդ անձրև էր երկիր ուղարկում,
Սրբում արցունքն ու կամաց քրքջում,
Գույներն էր փոխում և ինձ շշնջում.

«Ախ, մի օր էլ դու կյանքից ձանձրացած,
Տերևի նման , պիտի ընկնես ցած:
Թո՛ղ քո աշունն էլ լինի անչափ ուշ,
Ու բարությունդ մնա միայն հուշ»:

ՁՆԵՄԱՐԴԸ

Ձնեմարդն, ախ, արև էր ուզում՝
Բոցավառ գույներով իր բազում,
Ջերմություն, քնքշություն, սեր մի նոր
Իր աստծուց աղերսում ամեն օր:

Փոթորիկ քամիներն էլ անցան,
Նա մնաց իր տեղում անսասան:
Փաթիլներն իջան ցած ու կորան,
Ձուլվեցին, չունեցան օթևան:

Այդ տեսավ, արտասվեց նա ուժգին՝
Փաթիլե եղբայրներն իր անգին
Իջան ցած ու կորան առանց հետք,
Նրանց կյանքն անհետեթ ու՞մ էր պետք:

Այդ պահին նա լսեց ներսից ձայն.
«Սրտիդ մեջ կա արև, հանի՛ր այն,
Ջերմացրու՛ քո խոսքով բոցավառ,
Քո տեսքով, քո հոգով խանդավառ»:

Երբ սիրտն իր նա վառեց հուրհրան,
Մի մանուկ նկատեց լոկ նրան,
Փաթաթվեց ձեռքերով իր տաքուկ,
Շոյեց ձյունն իր մարմնի դեռ փափուկ:

Շողում էին աչքերում այդ մանկան
Երկու ջինջ արևներ իսկական:
Հալվում էր ձնեմարդն ու հուզվում՝
Ախր նա դեռ ապրել էր ուզում:

Իր վերջին պատգամն էլ շատ արագ
Տարածեց ցուրտ քամին այդ վայրագ.
«Էյ մարդի՛կ, մոռացեք ամեն վիշտ,
Մանկան ջինջ աչքերով նայեք միշտ»:

ԱՆՁՐԵՎ

Ուրիշ երգ ես երգում, անձրև՛,
Ինձ ինչ, դեղին տերևն անձև
Ընկնում է ցած,
Թե դեռ կախված,
Սրտաճմլիկ ու դողահար,
Արցունքն աչքին նայում է վար:

Հիշի՛ր այն օրն այնպես անուշ,
Որ երգեցիր մեղմ ու քնքույշ
Հավետ մի սեր,
Անվերջ հույսեր:
Անցան մարդիկ ինձ պատահած՝
Հովանոցներ վերև պահած:

Ու հասկացա՝ իմն էր միայն
Կապտականաչ մեղեդին այն,
Եվ գլխաբաց,
Մազերով թաց
Ես միացա քեզ կախարդված:
Ինչ վաղուց էր, տե՛ր իմ աստված:

ՍԻՐՈ ԵՎ ԹԱԽԻԾԻ
ԵՐԱՆԳՆԵՐ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՍԵՐ

Գարունը շատ տաք՝ կրքից խենթացած,
Շոյում է ուսս, համբուրում անհագ,
Ձմռան խոր քնից հազիվ արթնացած
Գգվում է քնքույշ ու հևում արագ:

Ու ես կանացի հատուկ բնազդով
Ուզում եմ զսպել կիրքը այդ գարնան,
Բայց արի ու տես ինչ-որ մի խանդով
Էլ ավելի եմ բորբոքում նրան:

Հևում եմ ես Է՛լ արդեն շնչասպառ,
Այս ի՞նչ հրաշք է՝ սիրո մեծ գետ եմ:
Գարունն ինձ օժտեց սիրով մի անսպառ,
Սիրո՛ւմ եմ, սիրում, բայց ու՞մ, չգիտեմ:

ՄՆԱՍ ԲԱՐՈՎ

Մնաս բարով, ի՛մ սիրելի,
Ու գիտե՞ս ինչ, ես չեմ տխրի,
Վարմունքն է քո աններելի,
Սերս էլ արդեն կույտ է մոխրի:

Մնաս բարով, ի՛մ հարազատ,
Առանց քեզ ես կապրեմ ազատ:
Տես՝ արևն է շոյում այտս,
Դրանից է սրտի խայտս,

Ու քամին է երգում զվարթ
Գիշերները միշտ սերենադ:
Սիրում է ինձ նույնիսկ բարդին,
Դարման չկա նրա դարդին:

Քո սերը ինձ պետք չէ բնավ,
Ընդմիշտ գնա, ավելի լավ:
Մնաս բարով, ի՛մ սիրելի,
Ասա՛ միայն, կգա՞ս էլի:

ՀՐԱԺԵՇՏ ԱՐՅՈՒՆՈՏ

Ծառեր կիսամերկ,
Մայթեր ու դեմքեր,
Հրաժեշտ արյունոտ...

Ու բութ մի դանակ
Հայացքով պահած
Դու ինձ մոտեցար:

Մի դաժան աշուն,
Մորթողի հայացք,
Հրաժեշտ արյունոտ...

Ու գործիդ սովոր՝
Հոգուս արգանդից
Կտրում ես սերս:

Չծնված արցունք,
Բառաչող մի ցավ,
Հրաժեշտ արյունոտ...

Ախր շատ է ուշ,
Ոչ թե իմ սերը
Այլ, ինձ ես մորթում:

Հեռացող ձայներ,
Քարացած մի ճիչ,
Հրաժեշտ արյունոտ...

Վերջ տուր, սիրելիս,
Մի՞թե չես տեսնում՝
Դիակս ես մորթում:

ԻՄ ՔՆՔՇՈՒԹՅՈՒՆԸ

Վազում եմ, վազում գարնանն ընդառաջ,
Փաթիլների տակ, բոբիկ, գլխաբաց:
Համբույր են տալիս անհույս, անհառաչ,
Փորձում են պահել փաթիլները թաց:

Քնքույշ համբույր է՝ սառը, թափանցիկ:
Դողում եմ ներքին ինչ-որ հուզմունքից,
Հալչում են անխոս, այնպես վաղանցիկ
Բյուրեղիկներն այդ գարնան բուրմունքից:

Այդ քնքշությունը սիրո փաթիլի
Ձեռքերով գրկած բերում եմ ես քեզ,
Իսկ ժպիտները սառած կաթիլի
Աղոթում են դեռ այնպես համր ու հեզ:

Այս տաք գարունը քեզ եմ տալու ես
Վերջ տալով ձյունե լուռ արցունքներին,
Ու իմ քնքշանքը, երբ որ դու վերցնես,
Կհասնենք սիրո մեր բարձունքներին:

ՔՈ ԱՉՔԵՐԸ

Ես նայեցի քո աչքերին
Շատ հարազատ ու մտերիմ,
Նրանց կլոր հայելում էլի
Տեսա մի դեմք ծիծաղելի:

Բերանն իմն էր, բայց շատ էր լայն:
Հա-հա՛, քիթ էր ասես թե այն,
Բայց կարծես թե նա էր տերը,
Այնպես լավ էր խաղում դերը:

Գլուխն էլ մի տանձ էր հասած:
Ամաչեցի անկեղծ ասած
Խիստ ծռմռված իմ տեսքից այդ,
Բայց միջոց կար շատ հանրահայտ:

Թաքնվեցի՝ քո աչքերն էին,
Ձևացրեցի՝ չէի նկատում,
Բայց ամեն տեղ քո աչքերն էին՝
Քո աչքերն էին ինձ միշտ դատում:

ԿՈՐԱԾ ԵՐԱԶՆԵՐ

Մութը զգուշությամբ՝ գող կատվի նման
Իջավ ցած, սողաց, հորանջեց երկար
Ու նայեց վրաս նա խիստ հարցական.
«Երազներ չունե՞ս, չէ որ այնքան կար»,

Ու ես սարսափած նայեցի շուրջս,
Առանց երազի ես շատ էի մենակ:
Վերցրի հուսահատ մեխս ու մուրճս,
Պատին ամրացրի երազս միակ:

Մինչև հիմա էլ պատից կախ ընկած
Ինքն ի՛ր մասին է կրկնում դառնացած.
«Երազներն իմ թող չիրականանան,
Բայց գոնե նորից ինձ վերադառնան»:

ՄԵՆՈՒԹՅՈՒՆ

Ձանձրույթն Է՛լ ձանձրացած ժամանակ
Ինձ լքեց, հեռացավ, ա՛խ, ընդմիշտ.
-Մենությու՛ն, շատ եմ ես միայնակ,
Գուցե դու, ընկե՞ր ես ինձ շատ ճիշտ,-

Նա կարմրեց ամոթից ու հուզված.
-Սիրելի՛ս,- շշնջաց,- տա աստված
Չնայես Է՛լ երբեք դեպի հետ,
Իմացի՛ր, դու իմն ես այսուհետ:

-Զու՛ր եմ ես քեզ ատել շարունակ,
Ուղեկցի պաշտոնը քո այդ սին:
Մենությու՛ն, չթողե՛ս ինձ մենակ,
Եկ հաշտվենք ու ապրենք միասին:

-Հանգիստ կաց, բարեկա՛մ իմ անգին,
Ես վաղուց եմ փորձում քո դեմքին
Արցունքներ նվիրել թանկագին
Ու շոյել խռոված քո հոգին:

ԱՆԾԱՆՈԹԻՆ

Դու նվագեցիր քո երգը հոգուդ,
Ի՛մ անծանոթ լուռ, հայացքով բոցե,
Սիրտս շնչասպառ ստեց անօգուտ.
«Ճակատագիրն է քո կյանքի գուցե»:
Մինչդէռ քո դեմքին մի զույգ կրակներ,
Կարծես թե արդեն հազարամյակներ
Պահել էին սիրո աստղեր անհամար,
Նաև շատ քնքույշ խոսքեր ինձ համար:
Անցա կողքովդ քայլքով նազելի,
Բայց քո հայացքը մնաց լուռ կանգնած
Ու դեռ չգտած՝ կորցրի քեզ էլի,
Ինչպես որ հազար տարիներ առաջ:
Այդ պահից սկսած, ուր է՛լ որ գնամ
Հայացքները քո թափառում են միշտ:
Ես տեսնում եմ պարզ նրանց ամեն ժամ՝
Հոգու մեջ արցունք, աչքերում խոր վիշտ:
Մայթին դեռ գամված հայացքները թաց
Ինձ նախատում են, հուզվում ու լռում.
«Ինչու՞ ուշացար, նա հենց նոր գնաց,
Նա ամբողջ կյանքում հենց քեզ է փնտրում»:

ՀԶՈՐ ՌԵՏԻՆ

Դե ջնջիր, դու ռետի՛ն իմ հզոր,
Այդ դեմքը, աչքերը այդ ստոր,
Հայացքը, ծիծաղը վարակիչ,
Դու ռետին-ժամանակ իմ փրկիչ:

Իմ հոգուց շուտ մաքրի՛ր դու նրան,
Ուզում եմ մոռանալ ամեն բան,
Միայն թե, ժպիտը այն թող,
Երեկոն՝ ժպիտի պես դյութող:

Վա՛հ, այս ի՞նչ փորձանք բերեցիր,
Երևի անզգույշ ջնջեցիր:
Ա՛յ ռետին, դու անխիղճ, անզգա,
Տե՛ս, ծակվեց իմ հոգին նուրբ, թղթյա:

ՄԱՄ ՋԱՆ

Ի՞նչ հզոր ձայներ են,
Լսու՞մ ես դու, մա՛մ ջան,

Ծառերը գոռում են.
-Սիրում եմ քեզ, մա՛մ ջան,

Ամպերը ոռնում են.
-Սիրում եմ քեզ, մա՛մ ջան:

Տիեզերքը նույնպես
Սիրում է քեզ, մա՛մ ջան:

Թող որ աստված էլ քեզ
Սիրի ընդմիշտ, մա՛մ ջան:

ԻՐԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ
ԳՈՒՅՆԵՐ

ՍԻՐՈ ԿՐԱԿԸ

Լճակի ջուրը կապույտ էր ու ջինջ, բնավորությամբ էլ շատ էր կանացի ու միշտ խաղաղ էր ու բարի: Նա համարյա միշտ նայում էր վերև: Այնտեղ միայն երկինքն էր, որը նույնպես միշտ կապույտ էր: Նա երջանիկ էր իր կապույտ աշխարհում և այդպես էլ կշարունակվեր, եթե մի օր...

Մի օր ջուրը թեթև քամուց բարձրացրեց գլուխը և սկսեց սանրել իր գրեթե կապույտ ալիքավոր մազերը, երբ ափում նկատեց բոցավառ մի սիրտ: Դա մի փոքրիկ խարույկ էր, որ վաղուց էր սիրահարվել իրեն և սիրո խոստովանության վրա ծախսելով ամբողջ ունեցած փայտը, անհույս վիճակով արդեն պատրաստվում էր մարվել, երբ նրանց հայացքները հանդիպեցին:

- Ա՛յ քեզ հրաշագեղ գույներ,- բարձրաձայն մտածեց ջուրը: Կրակի կարմիր, դեղին, կապտականաչավուն լեզվակները սկսեցին աշխույժ պարել երջանկությունից: Կրակի վրա նոր փայտեր ավելացրեցին և ափի մոտ ջուրը զգաց նրա ջերմությունը: Նրա բոլոր մոլեկուլները հուզվեցին ինչ-որ անհասկանալի ցանկությունից:

-Ես սիրում եմ նրան,- մրմնջաց ջուրը,- ինչպես է վառվում ինձ համար: Երանի կարողանայի նրան հասնել,- Նա ափի մոտ ինչքան ուժ ուներ մեծ ալիքներ ստեղծեց ու փորձեց հնարավորին չափ մոտենալ կրակին: Կրակի բազմերանգ արտացոլանքները հրավառության նման վառ ցոլցլացին բարձրացած ալիքների վրա շիկացնելով կապույտ գույնը:

-Ուշքի՛ եկ, սիրելի՛ս, կանչեց վերևից մի գորշավուն գեղեցիկ ամպ,- եթե դիպչես, կսպանես նրան, դու էլ կչորանաս և քո հոգին գոլորշիներ դարձած վեր կսավառնի:

-Ինչ ուզում է, թո՛ղ լինի,- շշնջաց ջուրը և հևիհև առաջ շարժվեց:

-Ես չեմ կարող տեսնել, թե ինչպես ես դու կործանվում, ես կփրկեմ քեզ,- գոռաց ամպը, որը վաղուց էր սիրահետում

լճակին,- ես կհանգցնեմ կրակը,- Նա ինքն իրեն չխնայելով անձրևի վերածվեց ու տեղաց հորդառատ:

Ջուրը անսպասելի ցավից պղտորվեց, հուսահատությունից լաց եղավ, բայց ա՛յ քեզ հրաշք՝ կրակը վառվում էր առաջվա ուժով: Ինչ-որ ձեռքեր ծածկոցով պաշտպանում էին կրակը անձրևից, հետո նրանք կաթսայով մոտեցան իրեն՝ ջրին, լցրեցին ու տարան ուղիղ կրակի վրա:

-Ա՛յ քեզ բախտ,- ուրախությունից ճչաց ջուրը ու սկսեց տաքանալ հաճույքից, տաքանալ, կրքոտ եռալ ու բլթբլթալ նուրբ ու քնքույշ բառեր կրակին: Կրակն էլ ճարճատելով երջանկությունից բոցեղեն լեզուներով լիզում էր կաթսան և հուզված երազում պատռել այդ երկաթե շապիկն ու խառնվել կապուտակ ջրին՝ իր գեղեցկուհուն: Երկուսն էլ գիտեին, որ իրենց մեծ սերը կործանելու է իրենց, բայց անզոր էին հեռանալ իրարից ու այլևս չտեսնել ու չզգալ միմյանց:

Լճակի ջուրը, որ անձրևից շատացել էր, վերջապես հասավ և բոլոր կողմերից փաթաթվեց կրակին: Նրանց համբույրից անհամար տաք գոլորշիներ էին բարձրանում: Խարույկը կարծես երջանկության գագաթնակետին էր: Այդ ամենը լոկ հավիտենականություն թվացող մի ակնթարթ էր, որից հետո մի փոքրիկ ամպիկ նայեց ցած ու ոչինչ չտեսնելով հարցրեց կողքի ամպիկին.

-Լա՛վ, որ ջուրը հանգցրեց կրակը, դա պարզ է, իսկ ինչպե՞ս այդ փոքրիկ խարույկը չորացրեց ամբողջ լիճը:

-Իմ խե՜նթ հիմարիկ, մի՛ մոռացիր, չէ՞ որ դա պարզապես փոքրիկ խարույկ չէր, դա սիրո կրակ էր:

-Աաաաա...

ԱՅ ՔԵԶ ԸՆՏԱՆԻՔ

Ամուսնացան սերը և տառապանքը: Նրանք վաղուց էին իրար սիրել: Իհարկե, սկզբից սերը ամենևին էլ չէր ուզում համաձայնվել, սեթևեթում էր, ինքն իրեն ամենագեղեցիկն էր համարում և սպասում էր ուրիշ փեսացուների, բայց տառապանքը շուտով գրավեց նրա ողջ էությունը և նրանք անկարող էին ապրել առանց մեկը մյուսի: Միայն թե սերը շատ էր սիրում երազել ու ոչ մի գործ տանը չէր անում: Ամուսինը ստիպված էր ամեն ինչ ինքը անել:

Այդ օրը սովորականի պես կինը քնքշորեն բացեց աչքերը ու սիրով լի հայացքը հառեց ամուսնուն:

-Ի՜մ սեր, միա՛կս, շշնջաց ամուսինը,- ինչ գեղեցիկ են քո աչքերը, ինչու՞ են մարդիկ ասում, որ դու կույր ես:

Կինը մեղմ ժպտաց ու թոթվեց ուսերը, հետո վեր կացավ, բացեց պատուհանը ու բուրմունքից արբած նայեց շուրջը: Մի համակրելի երիտասարդ կանգնած էր դիմացի մայթին ու անտարբերությամբ նայում էր ձեռքի ժամացույցին: Երբ նրանց հայացքները հանդիպեցին, կինը ժպտաց նրան: Տղան հազիվ զսպեց իրեն, որ վայր չընկնի: Չհասկացավ, թե ինչ կատարվեց իր հետ՝ սիրտը ուզում էր դուրս թռչել հուզմունքից: «Այս ե՞րբ են ծառերը այսքան գեղեցկացել»,- զարմացած մտածեց նա,-« ինչու՞ ես ուշանում, սիրելի՜ս, դե արի՜ շուտ, տե՜ս, ինչքան սիրուն է այս գարունը: Ես հիմա քեզ համար ձնծաղիկներ կգնեմ այս հեքիաթային բարի տատիկից»: Նա արագ մոտեցավ ծաղկավաճառին:

-Օ՜, ինչ գեղեցիկ ձնծաղիկներ են նրա ձեռքին, ապա մի նայի՜ր,- կանչեց սերը իր ամուսնուն: Ամուսինը, որ ցավի և տառապանքի տարբեր գույների կծիկներով գեղեցիկ ու նոր գիշերանոց էր գործում կնոջ համար, կիսատ թողեց իր գործը և շտապ մոտեցավ բաց պատուհանին: Նրանք արդեն երկար ժամանակ լուռ նայում էին դուրս ու հիանում, մինչև կինը նկատեց, որ տղան և ձնծաղիկները վաղուց թառամել էին և կախել գլուխները:

-Ինչքան տառապած դեմք ունի,- խե՛ղճ տղա,- ասաց կինը,- Հիշու՞մ ես, մի ժամանակ դու էլ էիր ինձ միշտ չորացած ծաղիկներ նվիրում,-Նրանք հեռացան լուսամուտից և կինը ճախրելով օդում սահուն վայրէջք կատարեց հայելու առջև դրված աթոռակին, իսկ ամուսինը անցավ իր առօրյա հոգսերին:

Ուշ երեկոյան այս համերաշխ զույգը հրավիրված էր ուրախ պարահանդեսի: Կինը շտապ բացեց զգեստապահարանը: Նա սիրում էր փոխել իր կերպարանքը և երբեք միևնույն զգեստով դուրս չէր գալիս: Վերջապես նա ընտրեց իր երկնագույն անիրական զգեստը, և ոչ ոք չէր կարող ասել գոյություն ունե՞ր այն, թե ոչ:

Ամուսինը գրկեց նրան, և ճախրեց զույգը մարդկանց և տանիքների վրայով ու հազարավոր սրտեր սկսեցին ուժգին բաբախել և սպասել ինչ-որ անհասկանալի պարահանդեսի, որը անխուսափելի էր և անկրկնելի իրենց կյանքում:

Տոնական լապտերները մեղմ ճոճվում էին պարեղանակի հնչյունների տակ և այնպես էին ուզում պտտվել, պտտվել, որ նրանց նայելիս մարդ կարծես գլխապտույտ էր զգում: Հազարավոր դեմքեր մի քանի ակնթարթ հայտնվում և անհետանում էին այդ խելակորույս ժխորում: Այդ պահին ձնծաղիկներով տղային տեսնելով ամուսինները իջան ցած:

-Բարև՛ տղաս:

-Բարև՛ ձեզ, ձեր դեմքերը շատ ծանոթ են ինձ, բայց չեմ հիշում, ե՞րբ եմ տեսել:

-Թույլ տվեք կրկին ներկայանալ, տիկին Սեր ու պարոն Տառապանք:

-Օ՛, հիմա հիշեցի, բայց ինչքան եք փոխվել, հասունացել

մեկ օրվա ընթացքում:

-Այո՛, դա այդպես է, մենք նույնիսկ հասցրել ենք զավակ ունենալ,- ասաց սերը,- Ամուսինս ուզում է նրան անվանել Ատելություն, իսկ ես՝ Խանդ: Դա մեր ցեղում անչափ շատ տարածված անուն է: Այն նույնիսկ պապիկիս անունն էր: Չգիտենք ինչպես վարվել:

-Նա հենց ծնված րոպեից սկսեց ատել ինձ,- բողոքեց տառապանքը,- հետո ատեց բոլորին ու ամբողջ աշխարհը: Նա մեզ կկործանի: Հարկավոր է զգուշանալ և պայքարել նրա դեմ: Ահա նա գալիս է: Մարդի՛կ, թույլ չտա՛ք, որ նա ներս մտնի, ամուր փակե՛ք ձեր դռները:

Ինչ-որ հարազատ ու զրնգուն ծիծաղ մի պահ դիպավ տղայի ականջին և անհետացավ ուրախ պարեղանակի մեջ: Տղան արագ շուրջը նայեց ու ասես հազարավոր ասեղներով ծակծկեցին մարմինը՝ նրա միակ սիրելի քնքույշ էակը համարյա գրկախառնված պարում էր ուրիշի հետ: Տղան խանդից ու ատելությունից պատրաստ էր սպանել այդ ուրիշին: Ատելությունը մեծացավ, մեծացավ, և նա զգաց, որ ատում էր նույնիսկ իր սիրելի աղջնակին:

Շտապ դուրս եկավ փողոց ու սկսեց վազել ինքն էլ չգիտեր թե ուր, միայն թե հեռու այդ ժխորից, մարդկանցից, սիրուց ու տառապանքից: Ամուսինները շնչակտուր հասան նրա ետևից, ներողություն խնդրելով իրենց չարաճճի զավակի փոխարեն, բռնեցին ականջից ու քաշելով հանեցին տղայի սրտից: Տղան տխուր նայեց նրանց ետևից ու ահավոր դատարկություն զգալով ներսում խոր հոգոց հանեց.

-Ա՛յ քեզ ընտանիք:

ԱՐՑՈՒՆՔԻ ԿԱԹԻԼԸ

Արցունքի կաթիլը մեծացավ մի փոքրիկ աղջկա աչքերում, մեծացավ, հետո դողդողաց ու կա՛թ, ընկավ ցած: Երբ ուշքի եկավ, ինչ-որ մի քնքույշ, դեղին ծաղիկ բարի ժպտում էր իրեն, իսկ ինքը ուզում էր բարձրաձայն լաց լինել վշտից՝ չպատկերացնելով նույնիսկ, թե որն էր այդ թաքնված վիշտը, որովհետև նա լացից էր ծնվել: Ծաղիկը կռացավ, համբուրեց նրան և զգուշորեն դրեց հողին: Ճիշտ է, նրան շատ էր դուր եկել քնքույշ, թախծոտ փոքրիկ կաթիլը, որն արևի տակ փայլում էր տարբեր գույներով ու զարմանքից պատրաստ էր լաց լինել, բայց սիրտը չէր ցավում նրան հողին հանձնելուց, չէ՞ որ դա կզվարճացներ իր բոլոր ընկեր ծաղիկներին, որոնք հողից կքամեին կաթիլը, կհարբեին և կծիծաղեին ինչքան ուզում էին:

-Տղանե՛ր, հապա մի նայե՛ք, արցունքը արցունք է թափում: հա՛, հա՛, հա՛, հի, հի:

-Թու՛, ինչ աղի է, դեղին անթառամի ճաշակն է էլի, հի, հի,- Արցունքը արցունքների միջից վախեցած նայեց շուրջը: Քրքջում էին խոտերը, ծաղիկները, նույնիսկ միջատները, նրան թվաց, թե ամբողջ աշխարհը և նրանց հետ էլ դեղին անթառամը: Արցունքը չգիտեր, թե ինչու էին ծիծաղում: Ինքն էլ էր ուզում, շատ էր ուզում ծիծաղել, որովհետև ծիծաղում էր իր սիրելի դեղին ծաղիկը, որին հավատում ու սիրում էր աշխարհում ամենից շատ, որովհետև նա առաջին ծաղիկն էր իր կյանքում: Կաթիլը վերջին ճիգերով բացեց իր թափանցիկ, նուրբ ու պսպղուն ատամնաշարը: Նրա արցունքախառն ծիծաղը ծամածռվեց, ժպտալով հալվեց և հողի վրա մնաց միայն մի սրտաձև թաց կետիկ:

ՍԽԱԼ ՆՈՏԱՆ

Հեքիաթը նստել էր ծառի ճյուղին և ոտքերը ճոճելով նայում էր դիմացի սենյակի լուսամուտից ներս:

Ուրախ մի պարեղանակ, որ ծնվում էր մի փոքրիկ տղայի քնքույշ մատների ու ջութակի հպումից, ցատկոտում էր սենյակում և ուսուցչի գոհունակ ժպիտից ավելի ոգևորվելով լցնում էր դատարկ տարածությունը, իսկ տղայի նոտայի տետրում գրված նոտաներն օրորվում էին այդ երգի տակ և սպասում իրենց հերթին: Նրանք իրար ձեռք բռնելով, սահելով դուրս էին թռչում ու քնքշորեն շոյում բազմաթիվ ականջներ:

-Ճըըըզզզ:

Ուսուցչի ակնոցները զարմանքից թռան ճակատին ու այնպես հուսահատված ընկան տեղը, որ նա ստիպված էր մատով ուղղել այն:

-Ճըըըզզզ,- երկրորդ անգամ տանջվելով դուրս եկավ մի անպետք և սխալ նոտա ու տղայի շփոթահար հայացքի տակ ցցվեց և մնաց կանգնած: Նա այնքան հպարտ էր, այնքան գոհ իրենից, այնքան երջանիկ: Երեխաների բարձր հռհռոցի տակ նա ուղղեց փողկապը և նայեց շուրջը:

-Ինչ գեղեցիկ է աշխարհը, ինչ սքանչելի նոտաներ կան այստեղ, երևի դրանք իմ հարազատներն են,- մտածեց նա,- բայց ինչու՞ լռեցին: Բոլորն ինձ են նայում, երևի ես դուր եմ գալիս նրանց: Սիրելինե՛րս,- շշնջաց նա և շտապեց մյուս նոտաների մոտ:

-Կա՛նգ առ,- լսվեց դիմացից մի սպառնալից ձայն, և մի ցմփոր սոլի բանալի թևքերը քշտած ու կռվի պատրաստ ցցվեց դիմացը:

Խեղճ նոտան ոչինչ չհասկացող հայացքով դես ու դեն էր նայում և աչքերն էր ճպճպացնում:

-Կորի՛ր այստեղից, գարշելի, սխալ արարած, սրիկա՛,- բղավեցին հնգագիծ բնակարանի համարյա թե բոլոր բնակիչները Այդ բղավոցները գնալով ուժեղացան այնքան, որ նա արդեն ոչ մի բառ չէր կարողանում որսալ այդ, կարծես թե հետզհետե մոտեցող մեղուների միալար դզզոցից: Ամենաճարպիկը նոտաներից դուրս ցատկեց իր տեղից, մյուսները արագ

հետևեցին նրա օրինակին և բռունցքները ամուր սեղմած հարձակվեցին վախից կծկված խեղճ նոտայի վրա, և պարզ չէր այդ ամենը ինչով կվերջանար, եթե ուսուցչի փայտիկը չթխկթխկար դատարկ աթոռի հենակին: Բոլորը մի պահ քարացան, իսկ նոտան օգտվելով առիթից իրեն դուրս գցեց բաց օդանցքից և այնքան արագ վազեց մինչև հոգնեց ու ուժասպառ կանգ առավ, նայեց ետ և համոզվելով, որ ոչ ոք չի հետապնդում իրեն, հանգիստ շունչ քաշեց:

«Այ քեզ կյանք: Տեսնես ինչու՞ են ինձ համարում սխալ, մի՞թե ես այդքան տգեղ եմ ու սխալ, Է՛հ, տհաճ բաները պետք է շուտ մոռանալ, ամբողջ կյանքն առջևում է»,- ինքն իրեն մտածեց նոտան ու սուլելով անցավ դաշտեր, անտառներ, լողաց ջրերում, թռավ ծառից ծառ, մի խոսքով, շրջեց ամբողջ աշխարհը՝ լավ բարեկամներ գտնելու:

«Ինչ երջանկություն է ապրել այսպիսի հրաշագեղ գույների աշխարհում»,- հիացմունքով կրկնում էր նա մտքում,- «ինչ ներդաշնակ են երգում միասին բարդին ու քամին, ինչ սիրուն են զնգում ծաղիկները արևի ջերմությունից, ինչքան մեղմ է բուրում ձնծաղիկի ձայնը: Ես սիրում եմ երգը, ես սիրում եմ կյանքը, ես կլռեմ, որ չխանգարեմ ոչ մեկին, ես միայն կլսեմ, բայց այնպես եմ ուզում երգել, գոնե մեկն ու մեկը ինձ հասկանար: Ես նրա համար կերգեի աշխարհի բոլոր երգերը միաժամանակ: Ես լավ, շատ լավ կերգեի»:

Գնում էր նոտան ու ձայն չէր հանում, գնում էր նոտան ու կանգ չէր առնում: Հանկարծ թփերի միջից մեկը ծղրտաց.

-Է՛յ, եղբայ՛ր, համերգ չե՞ս ուզում գնալ, ես ավելորդ տոմս ունեմ:

Դա մի ծերացած ծղրիդ էր, որ ուղղակի իր ազգակիցներին խրախուսելու համար այդ ձևով տարբեր հանդիսատեսներ էր հավաքում:

-Ինչու՞ չէ,- միանգամից պայծառացավ նոտան:

-Դե արագացրու, այն արդեն սկսվել է,- ասաց ծղրիդը և մի տերևից վարագույր քաշելով, տեղ տվեց նրան:

Համերգն այնքան էլ դուր չեկավ նոտային: Այնքան շատ ծղրիդներ էին միաժամանակ երգում, առանձին-առանձին գուցե ավելի լավ հնչեր:

-Ես ավելի լավ կերգեի,- բարձրաձայն մտածեց նոտան և ձեռքով վախեցած փակեց բերանը: Նա իր կյանքում արդեն երկրորդ անգամ էր լսում իր ձայնը:

-Վայ, բռնե՛ք այդ անպատկառին, բռնե՛ք,-գոչեցին ամեն կողմից,- նրան սպանել է պետք: Ոչ, ավելի լավ է կախել: Մի՞թե դեռ սխալ նոտաներ կան աշխարհում:

Սարսափից աչքերը փակած նա վազում էր ինչքան ուժ ուներ, բախվում էր ծառերին, ընկնում, նորից վազում: Վերջապես ամեն ինչ ետևում էր: Նոտան նստեց մի ծառի տակ և իրեն այնպես լքված ու մենակ զգաց, որ հոնգուր-հոնգուր լաց եղավ:

-Կա՛ռ, կա՛ռ,- այս ինչ լավ ես դու երգում,- լսվեց վերևից: Դա մի տգեղ ու սև ագռավ էր, որը հիացմունքով վերցրեց այդ հեծկլտացող նոտային ու քամու արագությամբ սուրաց յուրայինների մոտ:

-Բռավոո՛, բռավոո՛, դու իսկական երգիչ ես,- ագռավին գոռացին ու ծափահարեցին նրա նման սև ու տգեղ շատ ու շատ ագռավներ, որոնց թիվը գնալով ավելանում էր ու ավելանում: Այդ նորահայտ երգիչը անտառը լցրել էր իր կռկռոցով, իսկ խեղճ նոտան անընդհատ լսելով կռկռացող ագռավի կտուցից դուրս եկող իր ձայնը, այնքան էր հոգնել ու ձանձրացել, որ համաձայն էր նույնիսկ, որ իրեն ծեծեն բռունցքներով, վռնդեն, հալածեն, միայն թե ագռավը չքվի իր կյանքից:

Մի գիշեր էլ նա որոշեց փախչել: Չարչարվեց, չարչարվեց, բայց ոչ մի կերպ չկարողացավ դուրս գալ բերանի այդ մութ խոռոչից: Ագռավը կտուցն ամուր սեղմած քնել էր և նոտան

նույնիսկ ագռավի խռմփոցի մեջ էր լսում իր ձայնը: «Այ՛ քեզ դժբախտություն, երևի դա իմ ճակատագիրն է»,- մտածեց խեղճ սխալ նոտան: Նա երկար, շատ երկար ապրեց ու տառապեց այդ չար ու անտաղանդ ագռավի կտուցի մեջ:

Մի օր հրաշք տեղի ունեցավ, նոտան կարողացավ դուրս ցատկել ու երջանկությունից խելքը կորցրած ճախրել ազատության մեջ: Ագռավը քնի մեջ երգել էր և մոռացել փակել բերանը: Նոտան սկսեց ծառից ծառ թռչել, զմայլվել ճնճղուկների աշխույժ ծլվլոցով և բնության մյուս բոլոր զարմանահրաշ ձայներով :

Անտառը շուտով վերջացավ և նոտան հայտնվեց մի մեծ քաղաքում: Հուզմունքից նա չէր կարողանում հավատալ իր ականջներին: Մետրոյի սուրացող գնացքները, քաղաքային ավտոմեքենաներն ու ավտոբուսները այնպիսի հռնդյունով էին երգում հենց իրեն, այնպիսի ոգևորությամբ, և մարդիկ էլ դեմ չէին իրեն, այնպիսի հանգստությամբ էին ընդունում այդ ձայները:

«Ահա թե որտեղից եմ ծնվել»-մտածեց նոտան ու հիշելով փոքրիկին ու նրա ջութակը գոհ ժպտաց: Նա միանգամից այնքան մոտիկ ու լավ բարեկամներ գտավ, այնքան ծանոթ ու հարազատ դեմքեր, որ գլուխը սկսեց պտտվել: Քայլում էր նա հպարտ և ինչքան կոկորդում ուժ կար երգում էր և ոչ ոք չէր էլ մտածում բռունցքներով հարձակվել նրա վրա:

«Փաստորեն ոչ մի բան երբեք սխալ չի լինում, պետք է միայն ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում հայտնվել»- մտածեց ծառի վրա նստած հեքիաթն ու որոշեց հենց այդտեղ էլ ավարտվել, բայց նկատելով որ ցմփոր ու ճաղատ գլխով մի մարդ ձեռքերը քշտած փողոցի ծայրից վազում էր դեպի այդ նոտան, հետաքրքրությամբ նայեց շարունակությանը:

-Օգնեցե՛ք,- բղավեց նոտան ու պոկվեց առաջ : Այդ մարդը, չնայած իր գեր մարմնին, վազում էր թեթև և սոված գայլի պես փայլեցնելով աչքերը արագորեն կարճացնում էր իրենց միջև տարածությունը: Կողքից այդ բոլորը կատակ էր

թվում կամ խաղ «բռնոցի», և ոչ մեկի մտքով չէր էլ անցնում միջամտել կամ օգնել նոտային: Փողոցը վերջանում էր, իսկ առջևում փակ դարպասներ էին: Խեղճը հուսահատ կանգ առավ: Ոչ մի ելք չկար:

-Վե՛րջ,- գոռաց նա,- վե՛րջ,- արձագանքեցին երկնասլաց շենքերը և կարծես թե փլվեցին նրա գլխին: Չէ, շենքերը չէին, այլ հաստլիկն էր ամբողջ մարմնով ընկել վրան, որ ձեռքից չփախչի: Նոտան դողում էր ամբողջ մարմնով և աղերսող հայացքով նայում նրա աչքերին: Օ՜, երբեք նա այդքան երջանիկ ու գոհ աչքեր չէր տեսել: Չէ, դրանք չար մարդու աչքեր չէին, դրանք շոյում և փայփայում էին, հիանում և հպարտանում իրենով:

-Ախ՜, սիրելի՜ս, վերջապես ես գտա քեզ, դու հրաշք ես,- լսեց նոտան: Այդ բառերը զարմանալի ազդեցություն գործեցին նրա վրա, և նա հաճույքից գլուխը կորցրեց:

Հաստլիկ կոմպոզիտորը քնքշությամբ վերցրեց նրան, դրեց նոտայի տետրում: Այդ վաղուց իր համար նախատեսված հարմարավետ տետրե-բնակարանում ապրեց մեր նոտան անչափ երջանիկ ու անվտանգ: Ընկերների հետ միասին նա հաճախ էր գոհացնում համերգային դահլիճները իր հրաշալի երգերով, ուր մարդկային հոգիները խառնվելով ավտոմեքենաների հռնդյունին, սլանում էին դեպի երկինք ու տիեզերական տարածության մեջ արձագանքում թույլ, ներդաշնակ ու այնպես գերող:

Իսկ հեքիաթն արդեն վաղուց ամուր-ամուր բռնվել էր ծառի չորացած ճյուղերից ու մուշ-մուշ քուն մտել, երբեմն-երբեմն խռմփացնելով մեզ արդեն ծանոթ նոտային, բայց դա արդեն անմեղ մանկան հաճելի խռմփոց էր: Եթե երբևիցե լսեք դա ինչ-որ տեղ, և ձեզ դուր գա, իմացե՛ք, որ դա հենց ինքն է՝ մեր սիրելի նոտան, դուք անմիջապես կճանաչեք նրան: Հիմա մնում է բարի գիշեր մաղթել այս և աշխարհի մյուս բոլոր քնած հեքիաթներին.

-Բարի՛ գիշեր:

ՍԻՐՈ ԿԱԹԻԼԸ

-Սիրելի՛ս...

-Հեռացի՛ր և ոչ մի խոսք չէմ ուզում լսել,- բղավեց աղջիկն ու արհամարական հայացքը հառեց տղայի վրա:

-Սիրելի՛ս, ախր դու չգիտես, որ սիրում եմ քեզ:

-Ոչինչ չեմ ուզում լսել,- ասաց աղջիկն ու հանկարծ մի ճիչ արձակելով սկսեց տրորել աչքերն ու նայել շուրջը: Տղան անհետացել էր:

-Ես սիրում եմ քեզ,- նորից լսեց տղայի ձայնը:

Նայեց ցած ուշադիր և ի՞նչ, հատակին կանգնել էր մկնիկի մեծության տղան և չգիտակցելով իրեն հետ կատարվածը, շարունակում էր սիրո խոսքեր ասել:

-Հա՛, հա՛, հա՛, դու դեռ համարձակվում ես ինձ նման բա՞ն ասել ա՛յ պստիկ ճստի՛կ,- հռհռաց աղջիկը և գալարվելով ընկավ մահճակալին,- Էյ դու՛, փոքրիկ մկնի՛կ,- բարձրաձայն բացականչեց նա ծիծաղից արցունքակալված աչքերով,- կորի՛ր այստեղից, թե չէ հիմա կճզմեմ քեզ ոտքերիս տակ:

Տղան արցունքն աչքերին արագ դուրս վազեց փողոց և անհետացավ խոտերի մեջ: Աղջիկը գնաց դուռը ծածկելու, իսկ ծիծաղից գոյացած իր արցունքներից մի կաթիլ, չգիտես պատահաբար, թե պարզապես ճակատագրի բերումով ընկավ հատակին՝ ուղիղ տղայի արտասվելուց գոյացած արցունքի կաթիլի վրա ու հանկարծ աղջիկը զգաց, թե ինչպես էր ճմլվում սիրտը, կծկվում, կարծես թե բոլոր կողմերից սեղմում էին մի շատ փոքրիկ կաղապարի մեջ տեղավորելու համար: Ինչ-որ տարօրինակ բան կատարվեց իր հետ: Նա մոտեցավ հայելուն և... Ա՛յ քեզ բան, որտե՞ղ էր ինքը: Հայելին կարծես արտացոլում էր ամեն ինչ՝ սեղանը, գրապահարանը, դիմացի պատը, աթոռները, իսկ իրեն՝ ոչ: Բնազդաբար շարժվեց առաջ ավելի լավ տեսնելու:

Հայելու մեջ, սեղանի ոտքի մոտ էլ ինչ - որ բան կարծես տեղաշարժվեց: Արագ նայելով այդ ուղղությամբ, աղջիկը տեսավ իրեն՝ մկնիկի մեծության: Հուսահատ ու վախեցած մի ճիչ արձակելով սկսեց երկու բռունցքներով հարվածել հայելուն: Ապակին շատ փխրուն էր, ուժեղ հարվածներից բազմաթիվ կտորների բաժանվեց ու շխկշխկալով ցած թափվեց՝ ուղիղ արցունքի կաթիլի վրա: Այդ պահին հազարավոր կաթիլներ ցոլցլացին փշրանքների մեջ ու աղջկան նայեցին ամեն կողմից՝ հատակից, սեղանից ու նույնիսկ մի քանի աթոռների վրայից: Դրանք այդ նույն կաթիլի արտացոլանքներն էին, որոնք խելահեղ ծիծաղում էին վշտից :

-Այդ ի՞նչ կոտրեցիր,- լսվեց մայրիկի՝ ապա, նրա քայլերի ձայնը: Սենյակում բոլոր իրերը շունչը պահած սպասում էին լսել մայրիկի սնահավատ խոսքերը, որ իբր թե հայելին կոտրելը վատ նշան է՝ վատ դեպք է պատահելու:

-Վա՛յ, էլի պատուհանը բաց են թողել, ու քամուց հայելին ընկավ կոտրվեց: Ափսո՛ս, նա շատ գեղեցիկ նախշերով էր երիզված,- քթի տակ ինքն իրեն խոսելով մայրիկը դուրս եկավ սենյակից:

«Ինձ չնկատեց, էլ ոչ ոք ինձ երբևե չի նկատի». տխուր մտածեց աղջիկը.«Ոչ ոք չի հասկանա իմ վիշտը: Ես այլևս ոչ ոքի պետք չեմ»: Հանկարծ նա հիշեց տղային, չէ՞ որ նրան էլ էր նույն դժբախտությունը պատահել: Գիտակցելով իր պատճառած ցավի ուժգնությունը ամոթն ու ափսոսանքը սկսեցին խեղդել նրան: «Ախ, քիչ առաջ նա կանգնած էր այստեղ, ինչ մեղմ ձայն ուներ, ինչքան հարազատ էին աչքերը». հուզված մտածեց աղջիկը և նայեց դատարկ հատակին: Հանկարծ նա նկատեց մի սիրտ՝ արցունքից պատրաստված, ծիծաղից բզկտված, ապակու պես պարզ, հասարակ: Դա մեզ ծանոթ սիրո կաթիլն էր լացի և ծիծաղի արցունքների միացումից առաջացած, ջերմ, սրտաձև ու թափանցիկ: Նկատե՞լ եք արդյոք՝ ընկնելու պահին, օդում բոլոր կաթիլներն էլ սրտաձև են: Նրանք կաթալով երկնքից

կամ թե մանկան աչուկից, գուցե և սառնորակ աղբյուրի ծորանից մաքրություն ու սեր են բաժանում մարդկանց ու կամաց շշնջում.«Կաթիլ առ կաթիլ հավաքեք ձեր սերը՝ թող որ մեծանա այն, հզորանա այնքան, որ սիրե՛ք աշխարհի բոլոր երեխաներին, բոլոր մայրերին ու ամենից շատ, ամենից առավել սիրեք ձեր տունն ու հայրենի երկիրը, իսկ ձեր սիրո կաթիլները փայփայեք ու գուրգուրեք՝ նրանք թիթեռնիկի կյանքի պես կարճատև են»:

Աղջիկը զգուշությամբ վերցրեց իրենց սիրո միակ կաթիլը, համբուրեց այն ու մոտեցնելով իր բաբախող սրտին զգաց, որ այդ սերը լցրեց իր ամբողջ կյանքը: Նա գնաց փնտրելու իր միակին: Փնտրեց ամենուր, բայց ցավոք, ոչ ոք այդպես էլ չիմացավ, գտա՞վ նրան, թե ոչ: Դե ասենք, դա կարևոր էլ չէ: Չէ՞ որ հեքիաթը միայն սիրո կաթիլի մասին էր:

Աշնանային անսպասելի անձրևից մարդիկ այս ու այն կողմ էին վազում, պատսպարվում ծառերի, մուտքերի և թերթե հովանոցների տակ ու զարմացած նայում անձրևի մեջ սահող աղջկա վրա, որը պարզել էր ափերը վեր և պատրաստ էր գրկել անձրևի բոլոր կաթիլները, կարծես երկար, շատ երկար էր սպասել այդ հորդառատ անձրևին: Նրա բաց վարդագույն զգեստը անձրևից վախեցած ամուր-ամուր կպել էր մարմնին և սրթսրթում էր սառը, ծակող հարվածներից:

«Ափսոս, որ շուտ կտրվեց անձրևը»,- մտածեց աղջիկը,- «Այնպես եմ ուզում, որ Անդոն կողքիս լինի, իսկ նա արդեն մեկ շաբաթ է գործուղման է գնացել ու դէռ մի քանի շաբաթ էլ պիտի սպասեմ, որ ետ գա»: Նա մտքում պատկերացրեց իրենից տարիքով մեծ, բարձրահասակ, թիկնեղ Անդոյին՝ իր ձեռքը բռնած: Սիրտն ուժգին թփրտաց ու հալվեց, մատերը տաքացան այդ բարի և ուժեղ ձեռքերում: Ժպտաց աղջիկը մեղմ, հանգիստ ու երջանիկ: Ափսո՜ս, այդ պահին Անդոն մի քիչ թափանցիկ էր ու անիրական: Նա փակեց աչքերը, որ ավելի երկար զգա Անդոյի հորինված ներկայությունը: «Նա հիմա հեռու, շատ հեռու ինչ-որ քաղաքում է»,- մտածեց աղջիկը ու նայեց վեր,- «Գուցե այնտեղ էլ է հիմա անձրև գալիս: Համենայն դեպս, մեր գլխավերևում նույն երկինքն է, եթե նա էլ այս պահին նայի երկնքին, մէր հայացքները կհանդիպեն»:

-Արևի՜կ,- աղջիկը նայեց իրեն ձայն տվող տղային: Իրենց կուրսի Արամն էր:

-Այս ի՞նչ է, չե՞ս լսում, կոկորդս ցավեց բղավելուց, թրջված մկնիկի տեսք ունես, քիչ էր մնում չճանաչեի:

Արևիկը թույլ ժպտաց, թաքցնելով իր վշտի փոխարկվող ափսոսանքը. «Ինչու՞ է միշտ ինչ-որ պատահականություն խանգարում վայելել երջանկությունս: Երբ կողքից խոսում են ինձ հետ ու ստիպված եմ լսել, Անդոյի հորինված

պատկերը չքանում է»:

-Այս ի՞նչ է, քնա՞ծ ես: Այդպես կարող ես մեքենայի տակ էլ ընկնել:

-Դե լավ, ցտեսությու՛ն, Արա՛մ:

-Ի՞նչ , մի՞թե գժվել ես, բարև չտված արդեն ցտեսություն: Ի՞նչ է, դասի չե՞ս գալիս:

-Ո՛չ:

-Ուրեմն, ես էլ չեմ գնում: Ես քեզ հետ կլինեմ: Լսի՛ր, ի՞նչ է պատահել քեզ հետ, բացատրի՛ր, ազնիվ խոսք ոչինչ չեմ հասկանում: Ախ, հա՛, նրա մասին ես մտածում, Մելանիան ինձ ամեն ինչ պատմել է:

-Արա՛մ, ինձ հանգիստ թո՛ղ,- անսպասելի ճչաց աղջիկն ու ինքն էլ չհասկանալով ինչու սկսեց վազել՝ հետզհետե անհետանալով տղայի ապշահար հայացքից:

Աշնանային պարահանդեսին ներկայացած բամբասկոտ և գույնզգույն նախշերով զարդարված տիկինները, որոնք չնայած ընդամենը փողոցային գեղեցիկ ծառեր էին, այնպես զարմացան, որ նույնիսկ մի քանի տերևներ ուշակորույս վայր ընկան: Արևիկը ինքն էլ զարմացած մտածեց. «Ինչու՞ այդպես կոպտեցի Արամին, չէ՞ որ նա ոչ մի վատ բան չի արել, նույնիսկ միշտ ուշադիր է, մեղմ ու ներողամիտ: Բոլորն էլ ասում են, որ անտարբեր չի իմ նկատմամբ: Անդոն երևի հիմա ուղղակի կծիծաղեր և կանվաներ նրան խեղճ սիրահարված պինգվին սառեցված պաղպաղակի թղթի վրա: Ա՛խ, արդյոք երբ են վերջապես վերանալու մեզ բաժանող հեռավորությունն ու ժամանակը»:

Արևիկը նայեց ձեռքի ժամացույցին և շարունակեց խորհել. «Երբ կանգնում է ձեռքիդ ժամացույցը, դա հոգ չէ, կտաս ժամագործին, մի քիչ էլ հոգուդ մեջ կվրդովվես անորակ սարքելու և դրամիդ մնացորդը չվերադարձնելու համար և ամեն ինչ լավ կլինի, իսկ երբ կանգնում է քո ներքին ժամացույցը, այդ ոչ վերջ, ոչ սկիզբ ունեցող ժամանակը վերածվում է հավիտենական սպասումի: Ավելի դաժան ու

սոսկալի բան չկա»:

Արևիկը հասկացավ, որ պատրաստ էր գոռալ, վազել մինչև աշխարհի ծայրը՝ գտնելու այն կախարդին, որը կարող էր շարժել այդ կանգնած ժամանակը, պատրաստ էր վճարել նրան տալով նույնիսկ իր կյանքից տաս տարիներ, քսան, եռեսուն, հիսուն: Չէ, դա արդեն չափից շատ էր, դեռ պետք էր ապրել ու վայելել սիրո երջանկությունը մինչև վերջ: Իսկ վերջը ո՞րն էր: «Սերը վերջ չունի, ունի միայն սկիզբ»,- շշնջացին տերևները, և ծիծաղեցին արևները նրա աչքերում հիշելով իրենց սիրո սկիզբը:

...

Ավարտական երեկոն էր: Աղջիկները նույնիսկ մեկ ամիս առաջ պատրաստվել էին այդ օրվան և կարծես մեկ օրվա մեջ հասունացել և շատ գեղեցիկ օրիորդներ էին դարձել, իսկ տղաները դեռ նույն երեխաներն էին: Դեմքի աղվամազերը սափրելուց հետո նրանք համադասարանցի աղջիկներից չորս կամ հինգ տարով փոքր էին երևում, բայց դա բոլորովին էլ չէր խանգարում «իսկական տղամարդու» պահվածք դրսևորել: Նրանք խմում էին, ծխում և նույնիսկ զանազան մտքեր փոխանակում կյանքի, միջազգային իրավիճակի ու ֆուտբոլի մասին:

Արևիկը մի քիչ ուշանում էր, բայց համոզված էր, որ իր բացակայությունը ոչ ոք չէր նկատի, որովհետև նա քչախոս էր, բնավորությամբ ամաչկոտ և ինքնամփոփ և կարևորն այն էր, որ ամենևին էլ ժամանակակից տեսք չուներ՝ մազերը հյուսած, միշտ դպրոցական համազգեստով էր շրջում, կինո չէր հաճախում, լուռ կուլ էր տալիս իրեն վիրավորող բոլոր սրամիտ կամ բութ կատակները և չէր էլ փորձում գոնե ինքնապաշտպանության համար որևէ կոպիտ բառ ասել: Մթնոլորտը անտանելի և ճանձրալի էր դառնում: Աղջիկները արդեն հասցրել էին ուսումնասիրել միմյանց զգեստները և մտքում յուրաքանչյուրն իրեն ամենագեղեցիկը համարել: Տղաները՝ խմիչքին անսովոր, մի քիչ բթացել էին և թվում էր, թե եթե երաժշտությունը չլիներ, արդեն բոլորը կգնային տուն: Հանկարծ մուտքի

դուռը շրխկոցով բացվեց և բոլորը զարմանքից քարացան:

-Բարև՛ ձեզ:

-Վա՛յ, սա Արևիկն է,- առաջինը հասկացավ ու սթափվեց «դանդալոշ Սիմոնը», որն այդ մականունն էր ստացել իր չաղության և դանդաղկոտության պատճառով:

Հետաքրքրված աչքերը ծակծկեցին ուշացած աղջկան ոտքից մինչև գլուխ, գնահատեցին ըստ արժանվույն, և նույնիսկ ամենանախանձ հայացքներն իսկ չկարողացան թաքցնել իրենց համակրանքն ու գոհունակությունը: Նրա կարճ խոպոպիկները հուզված ճոճվում էին կիսաբաց ուսերի վրա, իսկ շառագունած այտերը ասես շփոթմունքից փորձում էին մի կերպ թաքնվել այդ խոպոպների հետևում: Ուշադրության կենտրոնում գտնվելուց երկնագույն զգեստը կրծքամասում բարձրանում ու իջնում էր այնքան արագ, որ թվում էր, թե ներսում բանտարկված ինչ-որ թռչուններ ուր որ էր կպատռեին այդ հագուստը և դեպի երկինք թռչելով երկնագույն մի սեր կնետեին առաջին իսկ պատահած երիտասարդին, որը համարձակ կլողար նրա երկնագույն աչքերի լճակներում հասնելով հոգուն:

Առաջինը ուրախ ժպտալով նրան մոտեցավ Մելանիան և առաջնորդեց սեղանի մոտ: Արևիկը հասկացավ, որ իր զգացածը հայելու առջև սխալ չէր, իրոք ինքը շատ գեղեցիկ էր: Այդ միտքը շոյեց իր կանացի ինքնասիրությունը ու ստիպեց նրան շարժվել կարծես ավելի հանգիստ ու վստահ, աչքերը փայլեցին երջանիկ մի բոցով: «Այսուհետ, ես կլինեմ գեղեցիկ իմ ամբողջ կյանքում», ուրախ մտածեց նա: «Մի՛ հավատա դրան, աղջի՛կ», շշնջում էր ժամացույցը, բայց ցավոք նրան ոչ ոք չէր լսում. «Ժամանակը դա թույլ չի տա, նա հրեշ է վրեժի ծարավ, նա կքամի, կխողխողի քո սիրտը ամեն մի կնճիռով, կծծի քո արդեն ծեր արյունը, կապտակի ու կծիծաղի դաժան, սառը, մահվան հեգնանքով»:

Ճաշկերույթն ավարտվեց ու զույգերը սկսեցին պարել: Արևիկը հետզհետե ավելի ու ավելի էր շառագունում չհասկանալով ինչ էր տեղի ունենում: Իր հետ պարում էր

այն տղան, որը միշտ ծիծաղել էր իր վրա, ծաղրել ու արհամարել, փոխարենը հիմա իր ականջից դեպի հոգին էին ծորում նրա կողմից ասված այնպիսի քնքույշ, նուրբ ու գեղեցիկ բառեր, որ ամեն ինչ երազ էր թվում: Աթոռին նստած Կարենն էլ անթարթ իրեն էր նայում՝ խմում էր ու նայում, նայում էր ու խմում, երբեմն ինչ-որ բան էր ասում ընկերոջը:

Այդ ընթացքում ընկերուհին՝ Մելանիան թեթև սեթևեթելով մոտեցավ Արևիկին ու արագ-արագ շշնջաց ականջին.

-Կարենը պատրաստվում է քեզ իր սիրո մասին հայտնել, բայց քեզանից վախենում է ու հուզվում: Այդ մասին ասել է Վահանին: Հիմա էլ խմում է, որ համարձակորեն մոտենա քեզ:

Կարենը սեր էր խոստովանելու իրեն: Դա անչափ հաճելի նորություն էր: Դեռ ոչ ոք նման խոստովանություն չէր արել իրեն, նույնիսկ սիրային երկտող էլ չէր ստացել, ինչպես ընկերուհիները: Արևիկը հետաքրքրությամբ սպասում էր այդ հրաշք վայրկյաններին: Վերջապես Կարենը դանդաղ վեր կացավ, մի կերպ ճոճվելով մոտեցավ, կանգնեց նրա գլխավերևում ու աթոռի ետևից ձեռքը դրեց նրա ուսին:

-Արևի՛կ:

Բոլորը հետաքրքրված նայեցին նրանց: Կարենը պինդ սեղմեց շրթունքները ու ձեռքերով փակեց բերանը, ասես կասեցնելու այդ անհամբեր դուրս եկող բառերի երթը: Արևիկը սպասողական վիճակում, գլուխը կիսաթեք, թիկունքի վրայից նայում էր ետ:

-Արև՛:

-Լսում եմ, ասա՛ Կարե՛ն:

Կարենը կմկմալով մի կերպ արտաբերեց,

- Ես քեզ սի..., ը...ը..., ես քեզ,- Նրա բերանը ծամածռվեց, մի քիչ սփրթնած դեմքը ձգվեց, աչքերը վախից չռվեցին:

-Արևի՛կ, Ես քեզ, բըըըըղ, սի, սի՛,- հասել էր երեկոյի ամենաողբերգական մասը: Անսպասելիորեն, սիրո բառերի փոխարեն, թափվեցին տարբեր գինիներից ու ոգելից խմիչքներից նեղացած կտրտված լոլիկներ, ծամած մսի կտորներ, ինչ-որ չմարսված, դեղնականաչավուն, լպրծուն զանգվածներ ու Արևիկի նոր զգեստի ուսից հոսեցին ցած: Դեռ լավ էր դեմքը փրկվեց այդ անսպասելի հարձակումից գլխի կիսաթեք դիրքի շնորհիվ: Կարենի խիստ շփոթված, մեղավոր հայացքի և միահամուռ հռհռոցի տակ աղջիկը վերցրեց պայուսակը ու դուրս վազեց փողոց: Մի քանի րոպեներ անց, կատարվածից ուշքի եկած մի քանի տղաներ վազեցին ետևից, բայց արդեն նրան գտնել հնարավոր չէր:

Արևիկը մոտեցավ աղբյուրին, զզվանքով և հիասթափված ամեն ինչից մաքրեց իր զգեստը, հետո քայլեց գիշերվա խավարում: Մենությունն ու գիշերը այնքան ճնշող էին, որ նա ինքն իրեն խղճալով լուռ արտասվեց: Արցունքները հեկեկալով հարցնում էին տիրոջը. «Ինչու՞, ինչու՞ ,ինչու՞ այդպես ստացվեց»: Հարկավոր էր տուն գնալ, բայց արդեն շատ ուշ էր, տանը բոլորը քնած էին, պետք չէր նրանց խանգարել, ոտքերն էլ կարծես իրենից առաջ էին արդեն որոշել աննպատակ թափառել:

Քայլում էր աղջիկը տխուր, մի քիչ վախենալով գիշերվա խավարից: Նկատեցին աստղերը նրան ու կանչեցին վերև: Այդպես են նրանք, միայնակ մարդ են տեսնում թե չէ, կանչում են, ձգում, դյութում ու երգում, իսկ թե հավատաս երկնային խոսքին, հոգիդ նրանց տաս՝ հավետ մենակ կմնաս:

-Բարև՛, ի՛մ արև:

-Բարև՛ Ձեզ: Իմ անունը ինչպե՞ս իմացաք, ես ձեզ չեմ ճանաչում:

-Ես այն աստղն եմ, որին նայում էիք, ես պատահաբար ընկա այստեղ,- ասաց ծխելու նպատակով փողոց դուրս եկած համակրելի երիտասարդը ու շարունակեց,- Քո նման

գեղեցկուհուն հանդիպելով ես զգում եմ, որ այլևս վերադարձի ճանապարհ չունեմ: Այնպես որ ստիպված եք ծանոթանալ ինձ հետ՝ Անդո:

...

Այո՛, հիշողությունները խառնվել էին ներկայի հետ, իսկ իր սիրո ապագան կարծես ինչ-որ ներքին կանխազգացումով սպառնում էր հայելու պես պարզապես արտացոլել դրանք և ընդմիշտ մնալ անցյալում: «Ոչ, ոչ, դա անհնար է»,- քթի տակ մրթմրթում էր աղջիկը մեծ ճիգերով ետ մղելով այդ չար կանխազգացումները, որոնք կարծես նորից հարձակվում էին իր վրա ամեն կողմից, իսկ որպես զենք ունեին աչքեր՝ անտարբեր աչքեր, մի չարաբաստիկ օր, որ ուզում էր մոռանալ, իսկ այն չգիտես ինչու ավելի էր սողոսկում ներս, նույնիսկ եթե փակեր աչքերը, ականջները, բերանը, կամ էլ դադարեր շնչելուց: Աղջկա անհանգիստ աչքերի առջև, կրկին, հայտնվեց այդ օրվա մայրամուտը...

...

Մայրամուտը ողողել էր հորիզոնի գիծը նուրբ, թափանցիկ, արևաճաճանչ, տեղ-տեղ էլ թունավոր գույներով ու այնքան հրապուրիչ էր ու գեղեցիկ, որ աղջիկը պատրաստ էր ամպե գավաթներով ըմպել այն մինչև վերջ, թեկուզ մեռնելիս լիներ հետո: Լավ էր, որ մարդու ձեռքը չէր հասնում այնտեղ:

-Տե՛ս, Անդո, արևը չի ուզում մահանալ:

-Ոչ ոք էլ չի ուզում մահանալ, Արևի՛կ, բայց ինչ կարող ես անել:

-Չէ՞ որ վաղը նորից կծնվի,- շարունակեց աղջիկը,- ինչու՞ չի ուզում:

-Դե, երևի, չի հավատում դրան, կամ էլ վաղը ծնվելու է ուրիշ արև, ուրիշ գույներով, մարդիկ էլ մի քիչ ուրիշ կլինեն, իսկ այս արևը սիրում է մեզ ու չի ուզում բաժանվել մեզանից: Աշխարհում բոլոր ծագած արևներից ամենաշատը սրան եմ

սիրում՝ այսօրվա արևը և մեկ էլ քեզ, Արև՛:

Արևիկը շառագունեց ձուլվելով երկնքի վրա արևից հոսող արյան լճակներին: Արևը մի վայրկյանում փոխեց իր բոլոր գույները, մահվանից առաջ ակնթարթորեն վերապրելով իր ամբողջ կյանքը՝ արևածագից մայրամուտ:

Ինչ-որ մի փոքրիկ դաշտային մկնիկ ապշահար, խոտերը խշխշացնելով փախավ թփերի տակ, կարծես իր տեսած ու լսած հեքիաթային պահի մասին աշխարհին հայտնելու, բայց չէ, նա այդպիսի հեքիաթներ շատ էր լսել: Տղան զգույշ, քնքշորեն բռնեց Արևիկի ձեռքը, և ապտակեց արեգակը երկնային մահվան ճիրաններից, խանդեց ու ապտակեց, սիրեց ու բորբոքվեց: Շառագունած դեմքերը մոտեցան իրար:

Մրջյունները խուճապահար վազվզեցին աջ ու ձախ, անհամար զոհեր եղան: Փրկվածները դեռ մահվան սարսափով այս ու այն կողմ էին փախչում արագ: Ինչ-որ աժդահա մարմիններ չգիտես ինչու որոշել էին բնաջնջել իրենց խաղաղ գերդաստանը՝ գլորվում էին խոտերի վրա և հևում շնչասպառ:

Օրը մթնեց: Ամպերը փակեցին դագաղը և արևի վրա հող լցրեցին, հետո անձրև եկավ: Մայր երկինքը կարծես թաղել էր իր միակ որդուն ու սգում էր զուսպ, իր վշտին սովոր արցունքներով: Այդ արցունքները թրջել էին ողջ դաշտը: Ծաղիկներն անհոգ ու հանգիստ ժպտում էին, մրջյունները հուղարկավորությունից հետո լվանում էին ձեռքերը: Անձրևի կաթիլները հոսում էին խոտերին նստած տղայի և աղջկա մազերից դեմքերին, դեմքերից ուսերին, թրջում հագուստը և միանալով երկու ջինջ ու անմեղ աչուկներից թափվող անձրևիկների հետ՝ անհետանում արցունքի ծարավ հողի մեջ: Աղջկա հեկեկոցը հուսահատ բախվում էր տղայի անտարբեր հայացքին և փշրված հայելու պես պսպղալով թափվում խոտերի վրա:

-Այս ինչ արեցի՛ր, Անդո:

...

Աղջիկը սթափվեց իր վատ հիշողություններից ու մոտեցավ սրճարանի դիմաց իրենց նստարանին:

«Ինչքան ենք Անդոյի հետ նստել այստեղ ու կատակել անվերջ, ծիծաղել, նույնիսկ որոշել ամուսնանալուց հետո մեր ապագա երեխաների անունները». մտածեց աղջիկը ու որոշեց մտնել սրճարան: Նա արագ սուրճ պատվիրեց ու նկատելով, որ իր և Անդոյի մշտական սեղանը զբաղեցրել էր ինչ-որ մի զույգ, նստեց դիմացի սեղանի մոտ: Նա անվերջ ժպտում էր հիշելով իր սիրած էակի պատմած զվարճալի պատմությունները, որոնք այնքան շատ էին, որ հազիվ էր տարբերում մեկի ավարտը մյուսի սկզբից: Արևիկը չէր կարողանում հայացքը հեռացնել իրենց սեղանի մոտ մեջքով նստած զույգից, այնքան ջերմ, հարազատ էր այդ պատկերը՝ նրանք նույնպես գլուխ գլխի տված, իրենց նման համարյա փաթաթված, սուրճի դատարկ բաժակի մեջ սիրով նկարում էին իրենց ապագան: Իրենից անկախ, ենթարկվելով Արևիկի սևեռուն հայացքի անբացատրելի ուժին՝ տղան ետ շրջվեց: Սուրճի գավաթը Արևիկի ձեռքից շրխկալով ընկավ ափսեի մեջ:

Անդոն էր: Նա իր ընկերուհու ականջին ինչ-որ բան շշնջաց, և զույգը արագ դուրս եկավ սրճարանից: Արևիկը բռնվեց, որ տակից փախչող աթոռից վայր չընկնի և այդպես էլ չիմացավ՝ այդ պատե՞րը փլվեցին գլխին, թե՞ ինքը փլվեց հատակին: Ուշքի եկավ, մարդիկ շուրջը հավաքված ինչ-որ բան էին փորձում ասել իրեն, բայց ինքը չէր լսում նրանց ձայները, որովհետև պատերը, աթոռներն ու սեղանները, նույնիսկ սուրճի գավաթները գոռում էին բարձրաձայն.

-Հանգստացի՛ր, աղջիկ՛, չէ՞ որ սա պարզապես հեքիաթ է՝ սիրո սովորական հեքիաթ:

ԹԻԹԵՌԱՅԻՆ ՍԵՐ

Օդը հարբել էր գարնան շնչից այնքան, որ այլևս չէր կարողանում խմել և արևի ճառագայթներից սարքած տաք գինին շաղ էր տալիս ամենուր և հյուրասիրում բոլորին, բոլորին, բոլորին, ովքեր հարբել էին ուզում: Այնպես որ մի տոնական եռուզեռ էր միջատների աշխարհում: Շրխկում էին բաժակներն ու սրտերը տաքանում, խենթանում էին միջատները, պարում էին ու դզզում: Մի փոքրիկ, սիրունիկ թիթեռնիկ հագել էր իր կարմիր պուտավոր զգեստն ու ոնց էր պարում, ոնց էր պտտվում նազանքով, բոլոր ծաղիկների սրտերը թրթռում էին, երբ նրանց կողքով էր թռչում:

Այնպես անհոգ էր նա, այնպես թարմ, այնքան վեհ ու բարձր էր նա թռչում չվախենալով, որ ինչ-որ վայրի թռչուններ իրեն հեշտությամբ կուլ կտան, իսկ բոլոր ծաղիկները շունչները պահած հետևում էին նրան: Այդ օրվա բոլոր թիթեռների հետ համարյա հասցրել էին ծանոթանալ ծաղիկները, բայց սա իրոք ուրիշ թիթեռ էր, բոլորովին նման չէր նրանց, կարծես ողջ գարունն ինքն էր թիթեռի կերպարանք ստացել ու քնքույշ թևիկներով կարմիր պուտավոր սեր էր շաղ տալիս աշխարհի վրա:

-Օգնեցե՛ք, լսեց թիթեռը հանկարծ ու նայեց ներքև: Մի վայրի մեխակ իրեն էր կանչում: Մոտեցավ ու զգուշորեն հարցրեց.

-Ինչո՞վ կարող եմ քեզ օգնել, քա՛ջ մեխակ:

-Նստի՛ր թերթիկներիս վրա ականջիդ ասեմ:

-Վայ, ապա մի նայե՛ք, գտավ իր ծաղկին ու նստեց վրան,- կամաց շշնջաց կողքից մի արևաածաղիկ,- մենք էլ կարծում էինք, թե հպարտ, անհաս մի էակ է, սովորական թիթեռ է, Է՛լի:

Շուտով շրջապատի ծաղիկները սկսեցին օրորվել այդ նորության շուրջ և մեղմ զեփյուռի թևերով բամբասանքը տարածել ամբողջ դաշտերով ու անտառներով: Մինչդեռ

թիթեռնիկը շփոթված ու կարմրած, ոչինչ չէր էլ լսում: Նրա մտքով երբեք չէր անցել, որ աշխարհում կար մի մեխակ, որ կարող էր այդպես քնքշորեն բուրել իր համար: Այդ բոլորն այնքան արագ կատարվեց, որ չհասցրեց գիտակցել թե ինչպես հայտնվեց այդ ծաղկի գրկում: Ինքը միայն ուզում էր օգնել նրան: «Պարզվում է, որ հրաշքը այն չէ, որ թևեր ունես ու վայելում ես այս դրախտային աշխարհը, այլ այն, որ աշխարհում կա ծաղիկ, միայն քո ծաղիկը, և դու սիրում ես նրան նույնիսկ քեզանից առավել»- զարմացած մտածեց թիթեռնիկը և ջերմ համբույրներից շնչասպառ հազիվ կարողացավ հարցնել.

-Դե ասա՛ ականջիս, ինչո՞վ կարող եմ օգնել:

-Հիմարի՛կ, ես քեզ սիրում եմ: Ես հորինեցի դա, որ դու ինձ մոտ գաս:

Թիթեռը երախտագետ հայացքով գոհ ժպտաց ու նորից համբուրեց ծաղկին: Հոգ չէր, որ նա իրեն խաբել էր, երևի այդպես էր պետք, այլապես իրենք չէին գտնի այս մեծ սիրո երջանկությունը, որի համար արժեր ապրել թեկուզ մեկ օր, այո՛, թիթեռային կյանքի մեկ օր:

Ժպտաց գարունը մեղմ ու գուրգուրեց նրանց, միացրեց երկու սրտեր իրար ու կապեց մի քանի կախարդական բառերով, որ ասաց մեխակը նրա ականջին.

-Իմ չքնա՛ղ, իմ անգի՛ն, հարազա՛տ թիթեռնիկ, դու իմն ես, միայն իմը ամբողջ մի հավիտենականություն:

-Վա՛յ, այս ի՞նչ է,- զարմացավ թիթեռնիկը, տեսնելով ինչ-որ տարօրինակ, կիսաչորացած միջատի, որ դժվարությամբ բացեց իր գեղեցիկ աչքերը ու կարծես հավիտյան փակեց:

-Որդ է, Է՛լի, ուշադրություն մի՛ դարձրու:

Օրը կամաց-կամաց մթնում էր, բայց սիրահար զույգը կարծես նոր էր հանդիպման եկել, այնքան շատ բան կար ասելու, և նույնիսկ արդեն կարոտում էին իրար առանց իրարից մի վայրկյան հեռանալու:

-Արևը մայր մտավ,- հոգոց հանեց մեխակը,- շատ ափսոս,

որ մթնում է, և քո գույներն էլ, թիթեռնի՛կ, արդեն այնքան էլ պայծառ չեն երևում:

Թիթեռնիկը շփոթված հայացքը հառեց երկնքին, խնդրեց, աղաչեց արևին, որ դեռ մի քիչ էլ մնա ու չլքի իրենց, բայց անխախտ են բնության դաժան օրենքները:

-Թիթեռնի՛կ, եթե ես թևեր ունենայի, կթռչեի աշխարհով մեկ, կփնտրեի ու կգտնեի թեկուզ փոքրիկ մի լույսի շող ու կրակի ջերմություն, կգրկեի ու կբերեի քեզ համար ու մենք նորից երջանիկ կլինեինք:

-Ես ունեմ թևեր, ես կթռչեմ, կրակ կբերեմ, դա թող լինի մեր սիրո անմար կրակը,- հևասպառ ասաց թիթեռնիկն ու անհետացավ խավարի մեջ:

-Ես քեզ կկարոտեմ,- նրա հետևից կանչեց մեխակը,- հիշի՛ր, որ ես միշտ քեզ հետ եմ:

Շատ փնտրեց, շատ հոգնեց թիթեռնիկը և, երբ հեռվից խարույկ նկատեց, երջանկությունից խելքը կորցրած վրա պրծավ ու թևերով գրկեց բոցի ծայրը, ուզեց պոկել այդ վառվռուն լույսից մի քիչ, որ իրենց սերը չմարի, այլ, վառվի այդ խարույկի պես գիշերվա խավարում: Բոցերի ցոլքերի մեջ նա ուրիշ շատ թիթեռներ նկատեց, որոնք խելակորույս նետվում էին այդ լույսի մեջ ու վառվում ամբողջովին, կամ էլ այրում թևերը: «Ախ, նրանք բոլորն էլ սիրահարված էակներ են»,- մտածեց թիթեռնիկը,- «եկել են իրենց սիրո կրակի ետևից»: Նա նայեց գետնին ընկածներին: «Սիրուց այրված հոգով, կրակից այրված թևերով, իմ խե՛ղճ, միամիտ միջատներ, ես այնպես լավ եմ հասկանում ձեր վիշտը»,- ասաց թիթեռը բարձրաձայն և հանկարծ հիշեց մեխակի կողքին ընկած խեղճ, տարօրինակ էակին ու մեխակի արտաբերած չոր ու անտարբեր բառերը. «Որդ է, է՛լի, ուշադրություն մի դարձրու»:

Թիթեռնիկի թևերն էլ այրվեցին ու վիատված, հոգնած ու տանջված սողաց դեպի իր սերը: Չստացվեց, ինչ արած, լավ էր ինքը մի կերպ փրկվեց: Այդ անթև ու խեղճ թիթեռին տեսնելով, մեխակը զզվանքով շրջեց գլուխը:

-Մեխա՛կ, սիրելի՛ս, ես քեզ շատ եմ կարոտել, շատ եմ տառապել ու տանջվել, օգնի՛ր ինձ մոտենալ քեզ:

-Դու ո՞ վ ես, ես քեզ չեմ ճանաչում:

Իմ անգի՛ն մեխակ, ես մեր սիրո կրակի ու քո երջանկության համար այրել եմ թևերս, մի՞թե ինձ չես ճանաչում, ես քո թիթեռնիկն եմ:

-Հիմա մութ է, ես ոչինչ չեմ տեսնում: Ինձ մի խանգարի՛ր, ես քնել եմ ուզում: Հեռացի՛ր այստեղից:

Խեղճ թիթեռնիկն ուշակորույս ընկավ սիրելի ծաղկի ոտքերի մոտ: Չէր հիշում, թե որքան ժամանակ էր անցել: Աչքերը դեռ լրիվ չբացած, ծագող արևը կամաց-կամաց զգացնել տվեց իր ներկայությունը: Բայց այս ի՞նչ հրաշք էր, երա՞զ, էր թե իրականություն: Վերջապես իր մեխակը ճանաչեց իրեն: Նա լսեց իրեն այնքան ծանոթ, հարազատ ու սիրելի ձայնը, որը նորից նույն քնքույշ բառերն էր ասում իրեն.

-Իմ չքնա՛ղ, իմ անգի՛ն, հարազա՛տ թիթեռնիկ, դու իմն ես, միայն իմը ամբողջ մի հավիտենականություն,-

Նա երջանկությունից հավաքեց ամբողջ ուժերն ու բացեց իր գեղեցիկ աչքերը:

Իր մեխակին փաթաթված ինչ-որ մի դեղին թիթեռնիկ մատնացույց անելով իրեն թովիչ ձայնով հարցրեց.

-Վա՛յ, այս ո՞ վ է:

-Որդ է, Է՛լի, ուշադրություն մի դարձրու:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՍԱԲԱՑ
PUBLISHING HOUSE

Պուշկինի 46
Հեռ. + 374 (55) 78 47 87, + 374 (10) 53 96 47
E-mail: lusabats@netsys.am lusabatc@mail.ru

Տպաքրված է «Լուսաբաց հրասարակչասան» տպարանում

ISBN 978-9939-69-409-2

9 789939 694092

ՏՊԱՐԱԿՉԱՏՈՒՆ
ԷՈՒ-ՍԱՖԱՅ
PUBLISHING HOUSE ИЗДАТЕЛЬСКИЙ ДОМ